§ 18. ՄԻՃ, փոքր, — խոշոր, մանր, — լավ, վատ, — բարձր, ցածր, — առողջ, հիվանդ, — թանգ, աժան, — լուսավոր, խավար, — հեռու, մոտիկ, — աջ, ձախ, — գեղեցիկ, տգեղ, — տար, սառ, — հեշտ, դժվար:

ՍՈՀՄԱՆՈՒՄ. Այն բառեր, վորոնի իմաստվ բոլորվին հակառակ են, կոչվում են հականիս բառեր, ինչպես վերեվի բառեր:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Գտեր հետեվյալ բառերի հականիշները յեկ զրի առեր հետեվյալ ծեփով՝ ուրախ - տիուր, հեռու, — մոս...

Ուրախ, — հեռու, — նեղ, — կուշտ, — յերջանիկ, — արագ, — մաքուր, — փակ, — նիհար, — ունկոր, — հարուստ, — մեղմ, — վառել, — ժանր, — զատարկել, — պարզ, — խորունի, — ուղիղ, — հարթ, — բարի, — թաց, — սիրուն, — զվարթ, — զճիտ, — զառը, — խոնավ, — բարեկամ, — կանխիկ, — ձրի, — կորուստ, — ողուտ, — յելք, — վեր, — աջ, — սուաջ, — հին, — լուրջ:

### ՏԵՂԵԿԱՆՔ

Դանդաղ, կամաց, — սոված, քաղցած, — անբախա, դժբախա, — լայն, ընդարձակ, — մոտիկ մերձավոր, — տիուր, — կեղտոտ, — խիստ, — բաց, — գեր, — չքավոր, — աղքատ, — հանդցնել, — թեթևութել, — սեթենթ, — մուշք, — նոր, — նետո, — ձախ, վար, ներքե, — թեթե, ծուռ, — սաղր, ծանծաղ, — պարպիլ, — բարդ, — խորդուրզ, — չար, — քաղցր, — պղասոր, — մոայլ, — տգեղ, — չոր, — վասու, — վճարովի, — ապառիկ, — թշնամի:

Ցույց տվիք հետեվյալ խոսքերի մեջ՝

1. Սիրտ բառի նշանակությունը. — նա սրտով մարդ ե. նա թուլլ սիրտ ունի, նա սիրտ չունի խոսելու. քո սրտով թող լինի. նա սիրտ չի անում ախտել գնալու:

2. Տուն բառի նշանակությունը. — նա տուն չունի. մի տուն վոտանավոր ասա. նրանք տեսով գնացին. նրա վերնատութը զատարկ է. նա տուն դնող չի. նա տան զավակ է. նա տան կատու չի:

3. Աչք բառի նշանակությունը. — նրա աչքը ցավում է. սեղանի աչք. ջրաղացի աչք. աչքով տալ. մեկին աչք դնել. մեկին աչքով անել. աչք հանեցի. աչք լույս. աչք խավարի. աչքից ընկնել. մեկի աչքը մտնել. աչքածակ:

4. Բերան բառի նշանակությունը. — նա փոքր բերան ունի. մի բան բերան անել. նա բերան պատող է. նա բերան չունի. դու քանի՞ բերան ունիս, վոր խոսում ես. նրանց տանը տասը բերան կա. գետի բերան, ձորի բերան:

5. Գլուխ բառի նշանակությունը. — մարդը զուխ ունի. նա զիխով մարդ է. դու քանի՞ զուխ ունիս. մեկի հետ զուխ դնել. հինգ զուխ կով. մի զուխ շաքար. սարի զուխ. տարվա զուխ. մի բանի զուխ կանգնել. նա զուխը կորցրել է. ինձ զլո՞ւխ նոր բերել. զիխի՞ս վրա. մի բան զիխի ընկնել. մեկին զուխ տալ. յերդվում եմ նրա զիխով. նա մեր զուխն է. դե զուխ մի տանի. նա զուխուտող է. զուխաց թաղեմ. զուխսդ մեռնի. «իսելոք զուխը». զուխը տաք մարդ. վասով-զիխով կորչել. զուխը քարը. զիխիկեր. ձուկը զիխով. կհոտի. զիխումը նստեց. տարվա ես զիխին. և զուխը լաց ելինում:

Համեմատեցեք սոտրեվ դրված նախաղասությունների մեջ գործածված միելուոյն բառերն իրար հետ յեզ տեսեք, թե այդ բառերից վորոնք են փոփոխվում յեզ վորոնք են անփոփոխ մնում բոլոր դեպքերում։

1. Աշուը գիրքը վերցրեց:
2. Աշուի գրքի կտղմը կարմիր է, վերցրու յեզ դասը պատշաճութեաւ:
3. Գիրքն Աշուին տնօր, թող զրքով պատրաստի դասը:
4. Աշուից գիրքն առ, վոր դասը զրքով պատրաստեաւ:
5. Մենք հիմա պատրաստում ենք մեր դասերը:
6. Դուք հետո կարտրաստեք:
7. Մեզնից մեկը հիմա պիտի պատրաստի:
8. Հետո մեկից կառնենք, կարտրաստենք:
9. Ահա գունավոր մատիտները, կապույտով յեզ կարմիրով նկարիր:
10. Աշուով միայն չի լինի, մեկն եւ թող զա:
11. Ահա նու գալիս և, նրան տվեք, վոր պատրաստի:

### ՏԵՂԵԿԱՆՔ

**Փոփոխվեցին.**—Աշուը (1-ին խոսք), Աշուի (2), Աշուին (3), Աշուից (4), Աշուով (10). գիրքը (1), գրքի (2), գրքով (3). վերցրեց (1), վերցրու (2). կարմիր (2), կարմրով (9). պատրաստիր (2), պատրաստի (3), պատրաստես (4), պատրաստում ենք (5), կարտրաստենք (6, 8), պիտի պատրաստենք (7). տնօր (2), տվեք (11), առ (4), կառնենք (8). մենք (5), մեզնից (7), մեկից (8) և այլն։

**Անփոփոխ մնացին.**—վոր (4, 11), հիմա (5, 7), և (2, 9), հետո (6, 8), ահա (9, 11) և այլն։

Լեզի մեջ գործածվող բառերը բաժանվում են չերկու խըմբի—փոփոխվող և անփոփոխ բառեր։

Փոփոխվաղ բառերը, նախած թե ինչ նախաղասության մեջ ինչպես են գործածվում, զանազան կերպ փոփոխվում են։

Հայոց լեզվին հատուկ է այսպես կոչված անփոփոխ բառերն ել վորու գեալերում փոփոխել։

## VI. ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՆՏ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՄ ՄԱՍՈՒՆՔ ԲԱՆԻ

### Ա. ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ ՅԵՎ ՆՐԱ ՀՈԼՈՎՈՒՄԸ

#### I. Ա.Օ.Ա.ՐԿԱՅՑԻ ԱՆՈՒՆԸ

§ 19. Մարդ, կով, ձի, շուն, հավ, ձուկ, քար, գող, վուկի, վարդ, միտք, ուսում, յերդ, —այս բոլորն առարկաների անուններ են։

**ԱԱՀՄԱՆՈՒՄ.** Առարկաները լինում են՝ ա. ռեշտավոր, (մարդ, ձի), վարսի իրենց կամենք շարժվում են, բ. անօւնեց (հար, հով, բոյս, ծառ, ծաղիկ), վարսի իրենց կամենք շարժվել չեն կարող։

Ապա՝ ա. հուռեական (մարդ, հար), վարսի անկախ գոյուրուն ունեն յել մատչելի յեն մեր զգայրաններին, այսինքն՝ կարող ենք այսուի տևաներ, ականջով նրա ձայնը լսել յեզ այլն, բ. վերացական (միտք, ուսում), վոր անկախ գոյուրյուն չունեն, բայց մրածվում են իրենց անկախ զոյուրյուն ունեցող յել հասկացվում են մժով։

**ԳԱԲԾՆԱԿԱՆ ԱՃԽԱՏԱՆՔ.** Հնուելյալ բառերից արտազրեցեք նախ շնչավոր, ապա՝ անշունչ առարկա ցույց տվող բառերը։

Զու, հավ, միս, ջուր, այծ, վոչխար, խոտ, կաթ, թթիթես, մրջլուն, սալլ, ծուխ, քամի, հովիվ, կառք, վոտք, ծառ, կայծակ, ժամացուց, պղինձ, թանաք, մատիտ, ճանճ, մոծակ, ձիճու։

**ԳԱԲԾՆԱԿԱՆ ԱՃԽԱՏԱՆՔ.** Հնուելյալ բառերից արտազրեցեք նախ շնչավոր, ապա՝ վերացական առարկա ցույց տվող բառերը։

Շաքար, ջուր, յերաղ, տանճ, ող, միտք, կամք, տախտակ, արծաթ, խոտ, բարկություն, կրակ, տանջանք, վախ, ձյուն, ամառ, սառուց, ծուխ, բարություն, հանգստություն, աշխատանք, մուրճ, կացին, ուզ, հիվանդություն, աղ, ձմեռուկ, համ, ախորժակ, փափաղ, ձգտում, պետություն, ժամանակ, ամիս, տարի, աղակի, ավազ, գինի, ալյուր, տարտություն։

**ԱԱՀՄԱՆՈՒՄ.** Այն բառը, վորի ցույց տված գաղափարն անկախ գոյուրյուն ունի (մարդ, քար, ձաղիկ), կամ մածնվում է իբ-

յեկ անկախ գոյարքուն ունեցող (միտք, ուսում, գործ), կոչվում է գոյական անուն կամ անուն:

**ԳԱՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.** Արտազրեցե՛ք յեկ ընդգծեցե՛ք գոյական անունները.

Հասանք Հրազդանին: Հեռվից յերևում եր Մասիսը կամ Արարատը: Անցանք կամքջով: Ահա «Արարատ» գործարանը, ուր գինի և կոնյակ են պատրաստում: Մենք արդեն Յերևան քաղաքումն ենք: Ահա քաղաքի հրապարակը, Կոմմունալների այգին, Աբովյան փողոցը, Քաղաքը բավականին փոխվել եւ միքանի տարի առաջ այդպես չեր: Ահա մի շնոք, վորի ճակատին գրված եւ «Կինո Նախրի», մի ուրիշ՝ «Կինո Պրոլետար». ահա «Խորհրդացին Հայաստանի», «Մաճկալի», «Ազանդարդի» իմբագրապին...

ՀԱՐՑԵԲ.

1. Բոլոր քաղաքներին Յերևան կարելի՞ յե ասել:
2. Բոլոր քաղաքներին քաղաք կարելի՞ յե ասել:
3. Բոլոր մարդկանց Արամ կարելի՞ յե ասել:

**ԱԱՀՄԱՆՈՒՄ.** Այն անունները, վարոնի կարող են տրվել թե առարկայի ու թե նրա տեսակին պատկանող բայր առարկաներին, կոչվում են հասարակ անուն (որինակ՝ մարդ, սեղան, ջուր, ձուկ, տսող, վարդ):

**ԱԱՀՄԱՆՈՒՄ.** Այն անունները, վարոնի ցույց են տալիս մի վարու անհատ, միայն մի համ առարկա առանձին վեցրած, իսկ նույն տեսակին պատկանող բայր առարկաներին տրվել չեն կարող, կոչվում են հասարակ անուն (որ՝ Գրիգոր, Յերևան, Մասիս, Սիսա լիճ, Սարս):

ԿԱՆՈՒՆ. Հատուկ անունները մեծաւառ են գրվում:

**ԳԱՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.** Արտազրեցե՛ք յեկ հատուկ անուններն ընդգծեցե՛ք.

1. Անգրկովկասի նշանավոր քաղաքներն են՝ Թիֆլիսը, Բաքուն, Բաթումը, Յերևանը, առաջինը Վրաստանի Ան Հանրապետության և, միննույն ժամանակ, ամբողջ Անդրկովկասյան Սֆի Հանրապետության մայրաքաղաքն եւ Թիֆլիսի միջով հոսում եւ թուռ գետը: Յերևանը Հայաստանի մայրաքաղաքն եւ, գտնվում է ՀՀ գդանի ամիսուն Բագուն Աղբյուջանի մայրաքաղաքն եւ, գտնվում եւ Կասպից ծովի մոտ, Աղջերոնյան թերակղու վրա, վար հարուստ և նավթով:

**ԳԱՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.** Գրեցեր 5-ական հատուկ անուններ՝ պամարգկանց, կանանց, պետուրյունների, բազաների, գետերի, գյուղերի, լեռների, ծովերի:

## 2. ԳԱՅԱԿԱՆԱԿԱՆ ԹԻՎԵ

§ 20. Կով, կովեր.—ձի ձիեր.—քար, քարեր.—միտք, մըաքեր—Աշակերտ, աշակերտներ.—ճանապարհ, ճանապարհներ:

**ԱԱՀՄԱՆՈՒՄ.** Գոյական անուններն ունեն յերկու թիվ՝ չեզակի յեկ հոգեակի: Յեզակիմ ցույց եւ տալիս մի առարկա, հոգեակին ցույց եւ տալիս նույն տեսակի՝ մեկից ավելի առարկաներ:

ԿԱՆՈՒՆ. Միավանկ բառերից հոգեակի կազմելու համար ավելցնում ենք եւ մասնիկը, իսկ բազմավանկ բառերին՝ եւ մասնիկը:

Միավանկ բառերի ի, ու ձայնավորները յեկ նրանց թիվը են-ի, վորը չի գրվում (շուն, շներ,—տիկ, տկեր):

Ճույց տվեր գոյականները յեկ նրանց թիվը.

Յելան, սահեցին հանկարծ  
փողոցի ամառվա փոշում—  
բյուրավոր բանակներ անահ—  
զրահապատ բանակներ ուժի:  
Շողացին սվիններ, սրեր,—  
յերգեցին կրծքեր հզոր—  
դրոշներ ծփացին արնավառ—  
դրոշներ կարմիր, բռոսոր...

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Ամենազում»)

**ԳԱՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.** Կազմեցե՛ք հետեւյալ անունների հոգնակին:

ա) Քար, հող, կավ, նավ, ծակ, սար, վարդ, սոխ, բառ,  
տառ, կով, այծ, հանճ:

բ) Գիրք, միրգ, միս, դիձ, կիր, թուր, ջուր, մուր, խուփ,  
զունդ, թուղթ:

գ) Ատամ, տախտակ, գրիչ, պարտեղ, աշակերտ, տարի, բուպե, վկա:

դ) Դաստիքիրք, սեղանատուն, ողանավ, լրագիր, հեռագիր,  
հոգակուկտ, մանկատուն, դաստուն, սեահող, ավազաթումբ, մարաքույր, քարաժայո, անձրևաջուր:



ե) Զրկիր, հացթուխ, մարդակեր, լուսաբեր, լրատու, դաստու, հեռախոս, թղթատար, յերկրագործ, զորավար, լրահս, հաստավիզ, հաստափոր, հանքափոր, սիրունատես:

զ) Ակ, ձուկ, մուկ, նուռ, դուռ, հարս, լեռ, քեռ, կուռ, դառ, թռու, փուռ, ձեռ:

է) Մարդ, կին, աղամարդ, անձ, զգացում, հուզում:

ը) Մուռը, խշտիկ, նշտար, կշեռք, կրակ, ճրագ:

թ) Աստղ, կոճղ սանր, յեղր, վազր:

ժ) Լու, ձու, բու:

**ՍՈՀՄԱՆՈՒՄ ա.** Այն միավանկ բառերը, վորոնիք գրաբառում և են վերջանում (ձուկն, մուկն, դառն), աշխարհաբարի հոգնակիում, վերականգնելով և-ն, վերջանում են ներ (ձկներ, մկներ, դառներ):

**ՍՈՀՄԱՆՈՒՄ բ.** Այն բարդ բառերը, վորոնց յերերորդ բառգրիչ մասը միավանկ բառ և յևի այդ միավանկ բառն իր բուն (զոյական) իմաստը պահում ե, հոգնակիում վերջանում են եր (դասպիրեք-դասազրքեր), իսկ յերե այդ միավանկ բառն իր բուն իմաստը չի պահում, իր գոյական նշանակուրյունը կորցնելով՝ ածական իմաստով և գործածվում (յերկրագուծ-յերկիրը (հողը) գործող կամ ծշակող), այդ դեպքում հոգնակիում վերջանում են ներ (յերկրագործներ, դորավարներ): Գաղտնավանկ բառերը (մսուր, կոճղ), վորոնց մեջ և յի լսվում, բայց չի գրվում, հոգնակիում ներ են վերջանում, յեթե ը-ն սկզբի վանկում ե լսվում (նըշտար=նշտարներ), մեծ մասամբ եր են վերջանում, յեթե ը-ն վերջին վանկում ե լսվում (կոճղ-կոճղեր):

**ՍՈՀՄԱՆՈՒՄ գ.** Միավանկ ու վերջացող բառերի (լու, ձու, բու) ու ձայնափորը, բացի սկզբնական ձեվից, մնացած բոլոր ձեւերում վ-ի յե փոխվում. որինակ, ձվի, ձվից, ձվով, ձվում, ձվեր և ալին:

Յերկավանկ ու վերջացող բառերի ու-ն միայն յեղակիում և վ-ի փոխվում, իսկ հոգնակիում՝ վոչ. որինակ՝ կատու, կատել, կատվից, բայց՝ կատուներ, կատուների...:

Բաղմավանկ ու վերջացող բառերի ու-ն յեղակիում կարող ե փոխվել վ-ի, կարող ե և չփոխվել (Ղամարլվից, Ղամարլուից). յերկումն ել գործածական են:

### Յ. ԳՈՅՉԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 21. ա) Ալստեղ մի զիրք կա... գրեեր կան:— Նա հիսուն կոռակեղ գրեի տվեց... գրեերի տվեց.— Այս թուղթը գրեից ե պո-գել... գրեերից ե պոկել: Նա դասը գրեով ե պատրաստում... գրեե-րով ե պատրաստում:— Այդ բոլորը գրեում գրված ե... գրեերում կան:

բ) Արշակի զիրքը կորավ... գրեերը կորան, Նա սպասում է գրեին... գրեերին:

### Հ Ա Բ Ց.

Դիրք բառն ինչպիս փոփոխվեց այդ խոսքերում:

Գիրք (գիրքը), գրեի (գրքին), գրեից, գրեով, գրեում:—

գրեեր (գրքերը). գրեերի (գրքերին), գրեերից, գրեերով, գրեե-րում:— ահա այն բոլոր ձեերը, վոր կարող ե ունենալ զիրք դո-ցական անունը աշխարհաբար հայոց լեզում. այդ ձեերը հինգ են:

**ՍՈՀՄԱՆՈՒՄ.** Գոյականները փոփոխվող բառեր են: Գոյակա-նի ամեն մի փոփոխված ձեվը կոչվում ե հոլով: Մի բառ հոլովել նանակում ե՝ ասել այն բայր ձեվերը, վոր նա կարող ե ունենալ լեզվի մեջ:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.** Լրացրեք հետեվյալ նախադա-սությունները.

ա) Քար բառով.— Ալստեղ մի... կա: Նա կանգնած ե... մաս: Նա... հեռացավ: Այս պատը ... ե շարած: Նա մնաց սար-

ու...  
բ) Քարեր բառով.— Առուն ... կա (ի՞նչ կա): Նա կնաց ... մոտ: Նա ... հեռացավ: Այս պատը մեծ-մեծ ... ե շարած: Նա մնաց սարերում ու...:

գ) Զուր բառով.— Առուն ... կա (ի՞նչ կա): Նա կնաց ... (ի՞նչի): Լվաց... (ի՞նչով): Հանեց ... (ի՞նչով): Խեղզվեց ... (ի՞ն-չում):

դ) Զուրեր բառով.— Մեր յերկրում լավ-լավ... (ի՞նչով) կան: Այս տեսակ-տեսակ... (ի՞նչերին) շեր են պետք: Խմենք ալս աղ-բյուրների պաղ-պաղ ... (ի՞նչերից): Նա կազդուրվեց ... (ի՞նչե-րնել): Տեսակ-տեսակ ձկներ կան այս... (ի՞նչերնեմ):

ե) Գիճի բառով.— Այս կարասում... (ի՞նչ) կա: Նա սպա-սում ե ... (ի՞նչի): Նա հիվանդացավ ... (ի՞նչով): Նա հարբել ե... (ի՞նչով): Թաղվեց ... (ի՞նչում):

դ) Մարգ բառով.—Սենյակում մի ... (ի՞նչ) կա: Նա հանդիպեց մի...: Առա մի ... Նրանց թիզն ավելի յի մի ...: Սիրո շմաց խեղճ ...

է) Մարգը բառով.—Ահա յեկալ... (սվ): Յես սպասում եմ այն ... (ում): Ստացաք քեզ ծանոթ... (ումից): Այս բանը յեղավ այն ... (ումիվ): Ել ուժ չմնաց իմ ծանոթ... (ումնում):

ը) Դուռ բառով.—Այս շենքում մի... փակ եւ նա կանգնած եմ... առաջ: Այս դուռն ավելի լայն եւ այն ... Յես ներա մտահարավային...: Նա մենակ կանդնած մնաց բաց...:

թ) Քույր բառով.—Ահա յեկալ Գուրգենի ...: Հովհաննեսը մի գիրք ընծայեց իր ...: Արշակը նամակ ստացավ իր ...: Այս բանը յեղավ նրա ...:

ժ) Մայր բառով.—Նրա ... բարի կին եւ նա կարոտ եւ փառաքշող ...: Թաղկոսն անջատվեց ... նա պարձենում եւ իր ...: Վոչ իր հորումն եւ տեսել, վոչ ել իր ...:

ԴԱՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Լրացրե՛ք հետեւյալ նախադասությունները՝ համապատասխան փակազգերում դրված հարցերի.

Յես ... (ի՞նչով) ... (վ՞րտեղից) յեկա ... (սւր):— Նա ... (ի՞նչով) կարեց ... (ի՞նչը):— Մենք ... (ի՞նչից) ... (ի՞նչ): Չինհցինք:— Մեր ... (ի՞նչում) մի ... (ի՞նչ) կա:— Յերեկ ... (սվ)... (սւմ): մուտից յեկավ... (սւր):— Նա շատ եւ պարձենում իր ... (ումիվ):— իմ ... (ովքեր): շատ խելոք են:

§ 22. Ահա իմ առաջ մի գեղեցիկ տուն: Մանում եմ ներս ընդարձակ սենյակ. լայն լուսամուտներ, մաքուր հատակ: Ահա տաներք. բարձրահասակ մի մարգ...

Այս հատվածում գոյականները (թե յեզակի և թե հոգնակի) դրված են անփոփոխ, ուղիղ ձևով և պատասխանում են ո՛վ կամ ի՛նչ, ովքե՛ր կամ ինչե՛ր հարցերին:

ԱՌԱՋՄԱՆՈՒՄ. Գոյականի անփոփոխ, ուղիղ ձևվը, վոր պատասխանում ե ով կամ ինչ հարցերին, կոչվում ե ուղղական հոլով:

§ 23. Մոռեցա պատին, նայեցի ժամացույցին. Հենց այդ ժամին պիտի գնալի, ներկա լինելի մի մողովի:

Այս հատվածում գոյականները պատասխանում են ինչի՛ (6) կամ ո՛ւմը հարցերին ու դրված են օրական հոլով:

§ 24. Այդ բանն իմացա իմ ընկերեներից՝ Մարակից, Գրիգորից ու Սահակից: Նրանք ել փայտից են պատրաստել:

Այստեղ գոյականները պատասխանում են ո՛ւմից, ինչի՛ հարցերին ու դրված են բացառական հոլով:

§ 25. Սպոցով կարեցինք, ուրագով տաշեցինք, առանձով կպցրինք: Մենակ Մարամով չեր լինի, միասին աշխատեցինք:

Այստեղ գոյականները պատասխանում են ինչո՛վ, ումո՞վ հարցերին ու դրված են գործիական հոլով:

§ 26. Այդ բանը գրեում կարդացի և օերակում նշանակեցի:

Այստեղ գոյականները պատասխանում են ինչո՛ւմ հարցին ու դրված են ներգոյական հոլով:

ՍՈՀՄԱՆՈՒՄ. Վորովինեսի գոյական բառը հայերենում իինք ձեզ կարող ե ունենալ կամ իինք տեսակ կարող ե փոխվել (§ 21)— հաւիլելով նայելի երա ուղիղ ձևվը, այդ պատճառով հայերենում իինք հոլով կա, վարոնցից ամեն մեկը մի ձեզ ե ցույց տալիս: Ուշեմն հոլովը հիմնվում ե ձեվի վրա. առանց ձեր հոլով չկատ: Այդ հոլովները հետեւյալներն են.

ա) Ուղղական հոլով, վոր ցուցց ե տալիս բառի ուղիղ, սկզբնական ձեր և յեղակիում հատուկ վերջավորություն չունի, իսկ հոգնակիում վերջանում ե եր կամ եւր, որինակ՝ մարդ, ձի, կով, հող, ջուր, լերկիր, մարդիկ, ձիեր, կովեր, հողեր, ջրեր, յերկրներ:

բ) Օրական հոլով, վոր յեղակիում ունի հետեւյալ վերջավորությունները:

1) ե (կովի, ջրի, աշակերտի, լճի) կամ ին (կովին, ջրին, աշակերտին, լճին—ե հոգով—տես § 27, 28, 29):

2) ու (զինու, ձիու, մատանու, սիրելու) կամ ուն (զինուն, ձիուն, մատանուն, սիրելուն—ե հոգով):

3) ա. վան, յան (դուան, լիուան, տարվան, վաղվան, չարութիւնն, արյան):

4) ոշ (քրոջ, կնոջ, տիրոջ):

5) որ (հոր, մոր, լելլոր):

6) ց (միայն հոգնակիում—մերոնց, ձերոնց, վոմանց, Գրիգորինց):

Ծանոթություն 1. Համապատասխան տրական հոլովի յեղակի թիվի վեց վերջավորությունների՝ վեց տեսակի հոլովում կա (տես ներքեւում «Հոլովումների պատկերը»):

դ) Բացառական հոլով, վոր վերջանում ե ից, ուց (կովից, ձից, գինուց, վասկուց):

Բացառական հոլովը վորոշ ասութներում վերջանում է և,  
որինակ յերկրե յերկիր, քարե քար, ծովե ծով և ալին.

դ) Գործիական հոլով, վոր վերջանում է ով (լճով, գինով,  
վոսկով):

Գործիական հոլովը կարող է վերջանալ նաև բ, որինակ՝ բա-  
րությամբ, չարությամբ.—այս գեպքում բ-ից առաջ և հնչյունը  
մ-ի յի փոխվում—բարությանը=բարությամբ:

ե) Ներզոյական հոլով, վոր վերջանում է ուժ (լճում, գի-  
նում, վոսկում):

Ծանոթություն 2.— Անձնավորություն ցույց  
տվող բառերը (մարդ, կին, աշակերտ, յերգիչ և այլն) ում  
վերջավորությամբ ներգոյական, սովորաբար, չեն գրվում.  
այդ բառերի ներգոյականը կազմվում է արական հոլովից  
մեջ բառն ավելացնելով (մարդու մեջ, կնոջ մեջ և այլն):

## ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԸ

### I

#### Յեզակի

#### Հոգնակի

Աւդդ. հող	հողը	հողեր	հողերը
Տր. հողի	հողին	հողերի	հողերին
Բաց. հողից	(հողիցը)	հողերից	(հողերիցը)
Գործ. հողով	(հողովը)	հողերով	(հողերովը)
Ներգ. հողում	(հողումը)	հողերում	(հողերումը)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Հոլովեցնք հող բառի նման  
հետեւյալ բառերը.

Քար(ը), ծով(ը), ջուր(ը), կով, այծ, տետրակ, գլուխ, խըր-  
ճիթ, բանվոր, ուսուցիչ, ճանապարհ, գործարան, դասագիրք,  
յերգիչ, գրատախտակ, սեահող, լրագիր, հեռագիր, հացթուխ, ջըր-  
կիր, ջըկեժ, վարդան, Աշոտ, պարտեզ, լույս, ուժ:

### II

#### Յեզակի

#### Հոգնակի

Աւդդ. գինի	գինին	գինիներ	գինիները
Տր. գինու	գինուն	գինիների	գինիներին
Բաց. գինուց	(գինուցը)	գինիներից	(գինիներիցը)
Գործ. գինով	(գինովը)	գինիներով	(գինիներովը)
Ներգ. գինում	(գինումը)	գինիներում	(գինիներումը)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Հոլովեցնք գինի բառի նը-  
ման հետեւյալ բառերը.

Մատանի(ն), կաշի(ն), ձի, թի, վոսկի, հոգի, տարի, գոտի,  
գարի, մարդ, վալրենի, խնձորենի, կաղնի, խոզենի, գեղանի,  
Անի, վանի, սիրելի, սեր:

### III

#### Յեզակի

#### Հոգնակի

Աւդդ. փուռ	փուռք	փուներ	փուները
Տր. փուն	(փունը)	փուների	փուներին
Բաց. փուից	(փունից)	փուներից	(փուներիցը)
Գործ. փուվ	(փունով)	փուներով	(փուներովը)
Ներգ. փոււմ	(փունումը)	փուներում	(փուներումը)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Փուռ բառի նման հոլովեցնք.

Զուկ, մուկ, լիո, կուռ, դուռ, նուռ, դառ, լեզ—  
թուռում, անկում, թազում, բացում, բորբոքում, զտում, վճարում,  
ձուլում:—Գոյութլուն, միություն, արյուն, անկյուն,—Գարուն,  
ամառ, աշուն, ձմեռ:—Որ, շաբաթ, ամիս, տարի, վաղը, յերեկ,  
կեսորի, իրիկուն, հերու, հիմա, կիրակի:

### IV

#### Յեզակի

#### Հոգնակի

Աւդդ. քուկր	քույրք	քույրեր	քույրերը
Տր. քրոջ	քրոջը	քույրերի	քույրերին
Բաց. քրոջից	(քրոջիցը)	քույրերից	(քույրերիցը)
Գործ. քրոջով	(քրոջովը)	քույրերով	(քույրերովը)
Ներգ. (չունի)	—	(քույրերում)	—

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Քույր բառի պես հոլովեցնք.

Մորաքսւը, հորաքուր, կին, տիկին, տանտիկին, ընկեր,  
տեր, տանուտեր, անտեր:

### V

#### Յեզակի

#### Հոգնակի

Աւդդ. յեղբայր	յեղբայրք	յեղբայրներ	յեղբայրները
Տր. յեղբոր	յեղբորք	յեղբայրների	յեղբայրներին
Բաց. յեղբարից	(յեղբարիցը)	յեղբայրներից	(յեղբայրներիցը)
Գործ. յեղբորով	(յեղբորովը)	յեղբայրներով	(յեղբայրներովը)
Ներգ. (չունի)	—	(յեղբայրներում)	—

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Յեղայր բառի պես հոլովեցե՞ք.  
Հայր, մայր, նախահայր, նախամայր, հորեղբալը, մոբեղ-  
բալը, սահահայր, սահամալը:

## VI

Հ Ա Գ Ե Ա Կ Ի

Աւզդ. մերոնք  
Զր. մերոնց(ը)  
Բաց. մերոնցից(ը)  
Գործ. մերոնցով  
Ներգ. (չունի)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Վերոհիշյալ բառերի պես հոլո-  
վեցե՞ք.

Զերոնք, իմոնք, քոնոնք, պատոնք, տատենք, հերանք,  
Ներսեսենք, վոմանք, ումոնք, վորոնք:

## Հ Ա. Բ Յ.

Ի՞նչպես կհոլովեք (յեղակի և հոգնակի)

1. Մուր, ջուր, սուր, թուր, հուր:

2. Գիր, կիր, բիր, ցիր, դիր:

3. Կես, եշ:

4. Մակու, Բագու, դակու, բու, լու, ձու:

5. Ղամարլու, Բաշնալու, Ռւլուխանլու:

6. Կարկուտ, բրուտ, մութ, յերգիչ, Մկրտիչ, գրիչ, սիրու:

7. Անձրևաջուր, քարարլուր, շղագիր, զրահակիր, կուսպի:

8. Ասո, Մկո, Գեռ, Սաքո, Կարու:

9. Յերգչուհի, Հայկուհի:

10. Լրատու, հարկատու, վերարկու:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Արտագրեցե՞ք յեվ գոյականի  
վերել նշանակեցե՞ք իր հոլովի մկրնատառը (Ու. Տ. Բ. Գ. Ն.)

1. Կալուտ յերկնքով ամպեր են սահում: Արեի ճառագալթ-  
ները սփռվել են սարերում ու ձորերում: Դպրոցում պարագ-  
մունքներն արդեն սկսվել են: Մեր դասարանի աշակերտներից  
վոմանք բացակա լին: Մենք դպրոց ենք լեկել՝ զրքերով, տես-  
քակներով, դասական բոլոր պիտուկքներով: Մեր ընկերներից՝  
Թագեսուր, Հովհաննեսը, Գաբրիելն ու Աննիկը չեն բերել իրենց  
պիտույքները:

Հ Ա Գ Ե Ա Կ Ի

Ասոյինք  
Ասոյինց(ը)  
Ասոյինցից(ը)  
Ասոյինցով  
(չունի)

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Արտագրեցեք յեվ փակագծերում  
դրած գոյականները հոլովեցեք՝ իմաստի համապատասխան:

Արամը մոտեցավ իրենց տան... (դուռ): Բարձր... (լեռ)  
ատորոտում մի գյուղ կա: Մենք գնացինք... (ձուկ): Նա պատա-  
հեց իր... (հայր և մայր): Յես իմ... (քույր) նամակ ստացա:  
Հոկտեմբերը... (աշուն) ամիսներից ե: Մենք սովորում ենք...  
(դպրոց): Այս ճանապարհն անցնում ե... (սարեր և ձորեր): Իմ...  
(յեղբայր) մի դիրք ստացա: Դու կոտրեցիր... (զինի) բաժակը:  
Հիվանդը... (տաքություն) մեջ ե: Մենք գրում ենք... (գիշէ և մա-  
տիտ): Մեր... (գրքեր) նկարներ կան: Դասարանի... (ջերմու-  
թյուն) աստիճանը բարձր ե: Մենք լեկանք... (կտոք): Այս  
տունը բարձր ե ձեր... (տուն): Հայրս ալժմ գտնվում ե... (քա-  
ղաք): Քամին փշում ե... (լիոներ): Գնա այս... (ճանապարհ):  
Սկանա... (լիճ) շատ ձկներ կան: Նա քննել ե աջ... (կուռ) վրա:  
Սերոբը տնքում ե ծանր... (բեռ) տակ: Այդու... (նուռ) գույն ունի:  
Բեր... (գինի և ողի) բաժակները: (Բուրդ)... գուլպա պատրաս-  
տեցին: Գնած իրերը փաթաթեց... (թուղթ): Զգուշացիք քացի  
տվող... (ձի), Ո՞վ չգիտե... (գումարում) գործողությունը: Բոլորդ  
ներկայացնեք բժշկական... (հետազոտում): Ամեն որ... (յեղանակ)  
որագիր կազմեցնեք: Զավիցնեք ջրի... (ջերմություն) աստիճանը:  
Մուկը վախենում ե... (կատու): Ճուտիկը գուրս յեկավ... (ձու):  
(Առու)... ափին մի ուռի կա, զորի... (ստվեր) հոտաղները հան-  
գստանում են... (ամառ) շոգին: Ուրբաթ... (որ) դասերը պատ-  
րաստել եմ, միայն... (թվարանություն) դասից լերկու խնդիր  
և մասում:

## Հ Ո Ւ Ե Ր

§ 27. Աղջի, Վարդիշաղ, թի հոգիդ սիրես,  
մի գարիպ գցիր, տես՝ ինչ ե ասում.  
աչքս խալարի, տեսիլք դառնամ յես,  
տեսիլք եմ տեսել գիշերս յերազում:

Մի գարիպ գցիր, թի վորդով ինդաս,  
ես յերազն իսկի յես լավ չեմ փորձել...  
Անրան դառները մութ ձորի միջին,  
խաղ ելին կանչում ու ձենով լալիս:  
(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ «Անուշ»)

ՍԱՀՄԱՆՈՒՄ. Գոյական անունների կամ իրենվ գոյական ա-

նուն գործածվող բառերի վերջը դրվող ս, գ, ց, (կամ թ) մասնիկ-ները հոդեր են կոչվում:

§ 28. Գիշերս (այս գիշեր) շատ անձրև յեկալ. զյուղիւ (այս գյուղի) բանն ել կտրվի. վերջին որերս (այս վերջին որե-րը) միշտ այսպես ե...

ՍԱՀՄԱՆՈՒՄ ա. ո հոդը, վոր դրվելով անվան վերջը, այս ցուցականի իմաստն ե ավելացնում, կոչվում ե ցուցական հոդ:

Յերբ բառի վրա ստացական այս ցուցական վերադիր ե դրված, այդ դեպքում ո ցուցական հոդ չի դրվում:

§ 29. Յերբ տեղ հասանք, յերկուսա (մենք յերկուսով) մը-նացինք, յերեք (գուք յերեքով) գնացիք: Մնացողներս (մենք մնացողներս) ել չիմացանք, թէ գնացողներք (գուք գնացողներք) ուր գնացիք:

ՍԱՀՄԱՆՈՒՄ բ. ս, գ հօդերը, վորոնք դրվելով բառերի վերջը, յես, գու, մենք, գուք բառերի նախակուրյունն են ավելացնում յել այդպիսով բառերին առաջին կամ յերկրորդ դեմքի նախակու-րյուն տալիս, կոչվում են գիմորու հոդեր:

§ 30. Եյ, հին ծանոթներ, Եյ, կանաչ սարեր,  
ահա ձեղ տեսա ու միտս ընկան,  
առաջս յեկան յերջանիկ որեր...

—Վախենում եմ յես... զամենք տեղդ դիր...  
սիրտս դոզում ե տերենի նման...  
Մոսի՛ ջան, Մոսի՛, գլխովու շուռ դամ...

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Անուշ»)

ՍԱՀՄԱՆՈՒՄ. ա, գ, ց, (թ) հոդերը դրվելով բառի վերջը յել  
նաև ավելացնելով իմ, քո, իր, մեր, ձեր, երանց ստացականների  
նախակուրյուն, կոչվում են ստացական հոդեր: Յերբ բառն ունի  
իմ, քո, իր (յուր), մեր, ձեր, երանց ստացական վերադիրներից  
մեկնումնեկը, այդ դեպքում ավելորդ ե բառի վրա ստացական հոդ  
դնել, որինակ՝ սովորական չե ասել—իմ գիրքս, քո գիրքդ:

§ 31. Ասում են՝ ուսիբ  
աղջիկ եր ինձ պիս,  
մնում եր յարին,  
ու չեկալ նա տես:  
եեղձը դողալով  
անհուլս կոացավ...  
ջրերի վրա

դրուիւ կախած

գեռ դողում ե նա...

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Անուշ»)

ՍԱՀՄԱՆՈՒՄ. ց (կամ թ) հոդը, վոր դրվելով բառի վերջը  
նրա բնդիանուր յել անորու նախակուրյունը սահմանափակում ե,  
վորու ու ծանոր առարկա ցույց տալով, կոչվում ե վորուող հոդ:  
Զայնավորով վերջացող բառերի վրա դրվում ե և վորուող հոդ (տա-  
րին, վկան, կատուն, բազեն, Մաքոն). բաղաձայնով վերջացաղ  
բառերի վրա, յերբ նաջորդ բառը նույնպես բաղաձայնով ե սկսվում,  
դրվում ե ը հոդը (քարք ջարգվեց), իսկ յերե նաջորդ բառը ձայ-  
նավորով կամ սկ, սպ, սր, սս, զգ, զբ, սմ, սփ, սկ, սպ, սս-ով ե  
սկսվում, և վորուող հոդն ե դրվում (քարն ընկալ, մարդն զգաց  
և այլն. տես § 9):

Վորոշող հոդ դրվում ե՝

1. Հասուկ անունների վրա. որինակ՝ Արամե ու Հայկը գը-  
նացին:

2. Հասարակ անունների վրա, վորոնք ցույց են տալիս առար-  
կայի սեռը—այս-ինչ կամ այն-ինչ տեսակը. որինակ՝ Կովը կաթնա-  
տու կենդանի յեւ.—խնձորենին ծառ ե:

3. Խոսի մեջ մի անգամ արդին հիւսված ծանօր անվան վրա.  
որինակ՝ մի աստղ ցոլաց յերկնքում, աստղը ցոլաց և անհայ-  
տացավլ:

4. Այն բառերի վրա, վորոնց վրա դրված են՝ այս, այդ, այն,  
սույն ցուցականները. որինակ՝ այս բաժակը, այս գինին, այդ  
կատուն, սույն գրությունը և այլն:

5. Այն բառերի վրա, վորոնց վրա դրված են՝ միտու, մեկեւ,  
բոլոր, այս-ինչ, այն-ինչ անորունները յել գու՞ր հարցականը. որի-  
նակ՝ մյուս տեսրակը, մեկեւ կատուն, բոլոր ծտուերը, այս-ինչ  
մարդք, այն ինչ տարին, վո՞ր գիրքը և այլն:

6. Այն բառերի վրա, վորոնց վրա դրված ե իմ, քո, իր, մեր,  
ձեր, երանց, իրենց, ուս, գրա, երա, ուսնց, գրանց, երանց,  
վորի՞ց, վորո՞նց, ո՞ւմ բառերից մեկն ու մեկը, որինակ՝ իմ անունը,  
քո աչքը, ո՞ւմ տեսրակը և այլն:

7. Այն բառերի վրա, վորոնք փոխարինում են զեղչված ան-  
փանը. որինակ՝ նա յերկու վորդի ունի, մեկը (մի գորդին) գրա-  
դես ե, մյուսը (մյուս վորդին)՝ անգրագետ: Այդպիս նաև իմը  
(իմ գիրքը), քոնք (քո գիրքը), նրանք (նրա գիրքը), Արամինք  
(Արամի գիրքը), յերեկվանք (յերեկվա դասը):

Այսպիսի դեպքերում, յերբ բառը ձայնավառավ է վերջանում, ոք կամ և կրկնակի նոդն է առնում, իսկ յերբ բաղաձայնով է վերջանում, միայն և (6) նոդն է առնում (տես զերևի որինակ-ները):

## Բ. ԴԵՐԱՆՈՒՆ

§ 32. Սուրիկը դպրոցից յեկավ տուն, ճա նստեց նախաձաշի: — Աշակերտները բակից հեռացան. Երանք այլիս դաս չունեցին: — Աշխենը շատ ուրախացավ, երան մայրը գիրք եր նվիրել: — Իմ յեղբայրը քաղաքում է ապրում. Երանից յերեկ նամակ ըստացա: — Ահա քո տված գրքերը. Մրանք կարդացել եմ: — Յես Շուստացեկ էմ ստացել. նոր տպված գիրք ե այդ: — Տես՝ ինչ լույս մատիտ ե. այս կտաս Վաչիկին: — Իմ «Կարմիր Արել» կորեկ ե. լավ գիրք եր այն: — Վերցըն այս տետրակները. Մրանք Մինասին կտաս: — Այդ գրքերը թող մնան. գրանք ինձ պետք են: — Այսոր յեկավ այն աշակերտը վոր յերեկ հիվանդ եր: — Մուկուչին գովում եր, ով տեսնում եր նրա արածը: — Կատարիր այն բոլորը, ինչ քեզ ասացի: — Ահա այն գուշը, ուր յես ապրում եմ: — Յեկա այն որը, յերբ գու բացակա ենի:

### ՀԱՐՑ.

Ընդգծված բառերը (ճա, երանք և այլն) ինչ բառերի տեղ են գրված:

Յես, գու, ճա, մենք, գում, երանք (նոքա), այս, այդ, այն, սա, զա, սրանք, գրանք, ով, ինչ, ուր, յերբ—զերա ն ու ն ն ե ր են: Դերանունները նշանակությամբ գոյական բառեր են:

ՍՍՀՄԱՆՈՒՄ. Դերանուն կոչվում են այն գոյական բառերը, վարոնի դրվագ են ծանոր առարկաների անունների տեղ՝ այդ անունները նորից չկրկնելու համար. որ:՝ Մուրիկը դպրոցից յեկավ տուն. ճա (Մուրիկը) նստեց նախաճաշի. — այստեղ ճա բառը դրված ե Մուրիկի անվան փոխարեն, նրա տեղ, վորպեսզի Մուրիկ բառը մոտեմոտ չկրկնենք:

Գոյական անունները վորոշ, հաստատուն նշանակություն ունեն (հաց, ջուր, վարդ), իսկ զերանունները փոփոխական նրանակություն ունեն, նայած թե ինչ բառի տեղ են գրվում:

## ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

§ 33. Յես գնում եմ, իսկ գու գալիս ես: Նա չի ուզում մեզ հետ գալ, Մրենք կարգում ենք: Դուք նկարում եք: Երանք գնացին, Յես այստեղ եմ: Մրենք այստեղ չկալինք:

Յես, դու, նա, մենք, գուք, նրանք—դրված են անող կամ յեղող անձի անվան տեղ:

ՍՍՀՄԱՆՈՒՄ. Յես, դու, նա, մենք, դուք, նրանք, ինքնի, ինքներդ, իրենք—կոչվում են անձնական գերանուններ, վարդիները լրվում են անձի անվան տեղ:

§ 34. Յա իմ զիրքն ե, իսկ այդ՝ քոնք: Յան վաղուց և կորիր: Մրանք մհերն են, իսկ գրանք՝ փոքրերը:

ՍՍՀՄԱՆՈՒՄ. Յա, այդ, այն, սա, դա, նա, սրանք, դրանք—կոչվում են ցուցական դերանուններ, վարդիները առարկայի անվան փոխարեն դրվելով՝ արտահայտում են ձեռքով ցույց տալու կամ մեխով ակնարկելու գաղափար:

Յան, այդ, այն ցուցականները դրվում են իրի անվան տեղ, իսկ սա, դա, նա—անձի անվան տեղ. որինակ՝ մատիտը տուր, այդ ինձ պետք ե (չի կարելի ասել՝ զա ինձ պետք ե): — Յես այդ գտել եմ (սխալ ե՝ յես զա զաել եմ): — Ահա այն տղան. սա լավ ե կարգում:

§ 35. Աշխենն ու Վարդուշը միշտ ոգնում են միմյանց: Երանք յերբեք չեն մոռանում մեկմեկու: Լավ զիտեն, զոր ընկերներն իրար պետք ե սիրեն և ոգնեն:

ՍՍՀՄԱՆՈՒՄ. Միմյանց, մեկմեկու, իրար,—կոչվում են փոխագաւառ դերանուններ:

§ 36. Ընտրության ժամանակ իմ ձայնը կստանա այն ընկերը, ով ամենից ավելի յեռանդուն ե: — Կատարեցէք այն աշխատանքները, ինչ հանձնարարել ենք ձեզ: — Դնա մոտիկ գուշը, ուր մեր ընկերներն են այժմ: Յեկ այն որը, յերբ յես այստեղ կլինեմ: — Յեկավ մեր ընկերը, վոր յերեկ հիվանդ եր:

ՍՍՀՄԱՆՈՒՄ. Ով, ինչ, ուր, յերբ, վոր—կոչվում են հարաբերական կամ օպղկապական դերանուններ:

§ 37. Ո՞վ զիտե նրա տեղը: — Արշակն ի՞նչ ասաց: — Ո՞ւր գիտանք: — Եկ՞ր յեկավ նա: — Այս գրքերից վո՞րն ես ուզում:

ՍՍՀՄԱՆՈՒՄ. Ո՞վ, ի՞նչ, ո՞ւր, յերբ, վո՞ր—կոչվում են հարցական դերանուններ:

§ 38. Յես ել մատիտ ունեմ, դու յել. իմը սկ ե, խսկ քոնք  
կարմիր—եմը թող չլինի, իրենք լինի—Սերն ե լավ, թէ ձերը—  
Նանցն ամենից լավն ե—Յես գրում եմ իմով, դու գրում ես  
քոնք;—Եմոնք տար, քոնքոնք բեր:

ՍՈՀՄԱՆՈՒՄ. Իմ, Տո, իր (յուր), մեր, ձեր, երանց, (նոցա),—  
կոչվում են առաջական դերանուններ:

§ 39. Յերեկ մի վամեն անցնում եր փողոցով. թե ինչ ոքմին  
եր նա, չկարողացա իմանալ:

ՍՈՀՄԱՆՈՒՄ. Վոմն, վոք, ոմին—կոչվում են առորոշ դերա-  
նուններ:

## ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

### Յ Ե Կ Ա Կ Ւ

Պւզդ.	յես, ինքս	դու, ինքդ	նա, ինքը	նա
Տր.	ինձ	քեզ	իրեն	նրան
Բաց.	ինձնից	քեզնից	իրենից	նրանից
Գործ.	ինձնով	քեզնով	իրենով	նրանով
Ներգ.	ինձնում	քեզնում	իրենում	նրանում

### Հ Ո Գ Բ Ա Կ Ւ

Պւզդ.	մենք, ինքներու	դուք, ինքներդ	նրանք, իրենք	նրանք
Տր.	մեզ	ձեզ	իրենց	նրանց
Բաց.	մեզնից	ձեզնից	իրենցից	նրանցից
Գործ.	մեզնով	ձեզնով	իրենցով	նրանցով
Ներգ.	մեզնում	ձեզնում	իրենցում	նրանցում

### Յ Ե Կ Ա Կ Ւ

Պւզդ.	սա	դա	ով	ինչ	վոր
Տր.	սրան	դրան	ում	ինչի	վորին
Բաց.	սրանից	դրանից	ումից	ինչից	վորից
Գործ.	սրանով	դրանով	ումով	ինչով	վորով
Ներգ.	սրանում	դրանում	—	ինչում	—

### Հ Ո Գ Բ Ա Կ Ւ

Պւզդ.	սրանք	դրանք	ովքեր	ինչեր	վորոնք
Տր.	սրանց	դրանց	—	ինչերի	վորոնց
Բաց.	սրանցից	դրանցից	—	ինչերից	վորոնցից
Գործ.	սրանցով	դրանցով	—	ինչերով	վորոնցով
Ներգ.	սրանցում	դրանցում	—	ինչերում	վորոնցում

Դիտեցեք ստորակետի կիրառությունն ստորեվ բերված հատվածներում պատահած գոյական անուններից ու դերանուններից հետո.

1. Հասավ Մըլըր, Զինումաչին, Ֆարս, Հնդստան, Արաբստան...
2. Ել թանգագին Քիրմանի շալ, ել մարդարիտ, զմրուխտ ու լալ, Հնդու խուրմա, փստա, բաղամ և... վոր մեկի անունը տամ: (ՀՕՎՀ. ԹՈՒՄԱՆՑԱՆ՝ «Անբախտ վաճառականներ»)
3. Եկել են Սասմա քաղաքի վրեն Բաղին, Կողբաղին, Սյուդին, Զարխաղին:

(ՀՕՎՀ. ԹՈՒՄԱՆՑԱՆ՝ «Սասունցի Դավիթ»)

ԿԱՆՈՆ. Խոսքի մեջ իրար հաջորդող, նույն նոլովակ դրված ու խոսքի մեջ նույն պատճենն ունեցող գոյականներն սորուակետով բաժանվում են իրարից: Յերեւ այդպիսի նույնահոլով գոյականներից յերկուսը, կամ վերջին յերկուսը բաժանված են իրարից յեւ, ու բառերով, սորուակետ չի դրվում:

1. Յես, դու, նա միասին գնացինք:
2. Մենք, դուք և նրանք շատ ենք աշխատել:
3. Նրանք իրար խանգարում են:
4. Ո՞վ ինձ նրան ցուց կտա:
5. Այս հեմ պետք ե հանձներ:

ԿԱՆՈՆ. Խոսքի մեջ իրար հաջորդող միասեսակ ու նույնահոլով դերանունները բաժանվում են իրարից սորուակետով, իսկ տարբեր տեսակի դերանունները չեն բաժանվում: Որինակ՝ վերևի որինակների մեջ յես, դու, նա ուղղական հոլով դրված դերանուններ են և ստորակետով բաժանված են. ո՞վ, ինձն, երան տարբեր տեսակի դերանուններ են—ո՞վ հարցական դերանուն ե, ինձ՝ անձնական, երան՝ ցուցական.—այդ պատճառով այդ դերանուններն իրարից ստորակետով բաժանված չեն:

Դիտեցե՛ք ստորակետի կիրառությունը հարաբերական կամ շաղկապական դերանուններից առաջ՝ ստորեվ բերված որինակների մեջ.

1. Մըր վատահությունը չի վայելի նա, ով կլուսափի շինարար աշխատանքից:
2. Միայն եա՝ կհասկանա, ով աշխատել ե գյուղում:
3. Այսպիս Հրահատը կատարեց այն, ինչ հրահանդված երեն:
4. Կատարիր այն խոսք, ինչ վոր ասել եմ:
5. Ահա այն վայրը, ուր նոր դպրոց պետք ե կառուցվի:

6. Ահա այն օճճիք, վոր պետք ե նորոգվի:  
7. Յեկ այն ժամին, յերբ այստեղ եմ լինում:

ԿԱՆՈՆ. Ով, ինչ, ուր, յերբ, վոր (ով վոր, ինչ վար, ուր վոր, յերբ վոր) հարաբերական կամ շաղկապոկան դերանուններից առաջ ստորակես ե դրվում, յերե այդ դերանուններով սկսվագ խոսել վերջադրս ե (հետ յէ դրված):

ՀՈԼՈՎՆԵՐԸ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ

## 1. ԱՐԴՅՈՒՆԱԴՐ ՀԱԼՈՎ

Յեվ ինչո՞ւ միայն եա յերգի,  
Միայն եա—Հովակիմը, Կարոն,  
Սողոմոնը, Մարգարը,  
Կամ մի բիթլիսցի, վանեցի Պոպս  
Այս տողերս քո կամքը յերգեց,  
Այս տողերս զու յերգեցիր:  
... Թե խարեն ուերեն այս հրկեց,  
... Յես եի . . . . կերպեմ:

(Зиб. 2413 б'я3 «Целесошівка»)

2 y p 3 b p

1. Միայն մվլ յերգի—նա, Հովակիմը, Կառն, Սոզոմոնը
  - և այլն:
  2. Այս տողերն մվլ յերգեց—քո կամքը, զու լերգեցիր:
  3. Ովքէր յեթե խարին—այս ուերը:
  4. Թու եւի հերպի—իսա եւի կերպեմ:

Շագմակի յենքականերն իրարից բաժանվում են ստորակառություններում:

Բաղմակի յենթականերից վերջին յերկուսը կարող են կապ-  
վել և բառերով. այս դեպքում ստորակետ չի զբանական:

- Ե՞ւ հազմբ-հազմբ լուսներ եկեկարյան...  
Յեվ դուք, աշխարհի գեղեցկուիթինե՛ր—  
Հաղթ մերենանե՛ր ու գործարանե՛ր...  
Դուք, նավե՛ր, ջրե՛ր, յերկարուղինե՛ր,  
Հանե՛ր ու ցանե՛ր...  
Զքնաղ քատրոննե՛ր, հանճարի սնե՛ր....

(ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ՝ «Հավասարություն»)

ԱՅՀԱՄԱՆՈՒՄ. Աւդղական հոլովք, ցույց տալով այն առարկան, վորին դիմում ենք մի բան սաելու կամ հարցնելու համար, գործ և ածկում իրենի կոչական-ուղղական, կարն առաջ՝ իրենի կոչական բառ:

Կոտական բանի մրս դրվում է տես, կամ յերկար նշան:

Յեթի կոչական բառն ունի վարելանական լրացում, շեշտադրությունը և լրացումը են լրացումի վրա (սիրելի Արամ):

Ցույց տվեք ուղղական հոլովի դերը նախադասության մեջ ատորիկ բերգած ողինակներում.

Տիբեթից կարող և թռչել  
Ա-աւո, Պետոգրադ, Բիրլիս...  
Բիթլիսից՝ Մարտել, Եւրեվան,  
Պետին, Գալիխե, Զիբազու:

Z U P 3

Ա՞ւր կարող ե թռչել - Բաշտ, Պետրովադ և այլն:  
Մենք ուժ ժամ աշխատում ենք: — Ամբողջ որն անձրև յե-  
կափ: — Առան հինգ տարի այստեղ մնաց:

2 U P 8

Վերաբենք աշխատում՝ ուր ժամ,  
Այս գիրքը մի ոռւթիւն արժեն: — Եաքարի բեռը քառասուն  
կիլո կշռեց:  
Մենք յերեկ ներկայացում զեացինք: — Սաքոն վորս գնաց,  
իսկ ներսոն՝ հուն:

**ՍԱՀՄԱՆՈՒՄ**. Աւզգականը պատասխանելով այր, Վորտեղ, միջնեվ յեր, Վորքան ժամանակ, ինչքան, Վորքան հարցերին, խռովի մեջ կարող է ցայց տալ զործողության տեղը (Վորտեղ հանգում կամ մերշանում է սկսված զործողությունը՝ հասավ Յերկան)։

գործողության տեկողության ժամանակը (հինգ տարի ապրեց), բանակը (քառասուն կիլո կշռեց), նպատակը (վորս գնաց):

**Ծանոթություն.**—Կան լեզուներ (որ՝ ոռուսերենը), վորոնց մեջ ուղղականի այս տեսակին փոխարինում է այսպես կոչված հայցական հոլովը, վոր հաճախ իր ձեռվ տարբերվում է ուղղականից: Հայերենում հայցական հոլովը սահեկ չէ վի չկա, ուստի հայցականն իրու առանձին հոլով չի դրվում: Մեր քերականներից վոմանք, հետեւելով ոտար լեզուների քերականներին, մեր հոլովների շարքում դնում են առանձին հայցական հոլով, նկատի ունենալով բառի վոչ թե ձեզ, այլ նրա պաշտոնը խոսքի մեջ:

Դիտեցեք ուղղական հոլովի կիրառումը ստորեվ բերված որինակներում:

Աթոն արեվը շատ եր սիրում.—Իրենց ախոռից միակ կովնու յերկու յեզերեք տանում եր դուրս.—Աթոն հագնում եր ուրեք:—Փեղ կանգնի՝ գերան կկոտրի:—Մեկը հոռովել եր զլում:—Հետո միու հոտաղն եր հոռովելի խոսքերն առում:—Նա կուսակցական գպրոցն ավարտել ե (Մ. ԱՐՄԵՆ):

Նա հայր ուներ, իսկ հայրը՝ վոյխարենք:—Ծեզին վոչխարք քշիր քաղաք:—Ծատուն տղան տաս ձիու բեր ապրանք բերեց:—Ապրանքը թանգացնում եր ժամեւժամ: (ԱկՍել ԲԱԿՈՒՅՑ):

Փողոցում մի մարդ տեսավ:—Ավաղակները մի մարդ են սպանել:—Ասո ապին վորդի ունի:—Մուկուչը հայր ել ունի, մայր ել, բույր ել, յեզեր ել:—Մեթոն իր հայրն ել և կորցքել, մայրն ել, յեզերայն ել:—Մի կով են մորթել ու մի յեզ:—Յես կարու Մարո չեմ տեսել:

**ՍԱՀՄԱՆՈՒՄ.** Ուղղական հոլովը, պատասխանելավ ինչ նարցին, նախախ ցույց ե տախի բայի այն լրացումը, վոր կրում ե իր վրա բայի ցույց տված ու յենքակալի կատարած գործողությունը: Որինակ՝ Մարոն կոտրեց բաժակը նախադասության մեջ Մարոն և բաժակը բառերը յերկուսն ել ձեռվ ուղղական հոլով են դըրված, բայց նախադասության մեջ տարբեր, նույնիսկ իրար հակառակ պաշտոն ունեն: Մարոն կոտրելու գործողությունը կատարողն է՝ կոտրողը, իսկ բաժակը՝ այդ գործողությունն իր վրա կը ողջ՝ կոտրված ե: ալսպիսով, Մարոն այս խոսքի մեջ յենքակալի պաշտոն ունի, իսկ բաժակը՝ կրող խթգրի:

Հայերենում կրօղ խնդիրը կարող է ուղղական հոլով դրվել

թե այն դեպքում, յերբ անշունչ առարկա (իր) ե ցույց տալիս, և թե այն դեպքում, յերբ շնչավոր առարկա (անձ) ե ցույց տալիս: որինակ՝ ավագակները մարդ սպանեցին նախադասության մեջ մարդ բառը շնչավոր առարկայի անուն ե, բայց, պատասխանելով ի՞նչ սպանեցին հարցին, դրված է ուղղական հոլովի ձեռվ: Այս դեպքում շնչավոր առարկան մտածվում է իրու իր: Այդպես նաև հետեւյալ որինակներում՝ Արամը փողոցում մի մարդ տեսավ (ինչ տեսավ).—Դպրոցում առակերտ չտեսա (ինչ չտեսա).—Նա իր հայրն ուրացավ (ինչն ուրացավ) և այն:

**Ծանոթություն.**—Ռուսերենում կրող խնդիրը յեթե արական և չեղոք վերջավորություն ունեցող բառ ե, շնչավոր առարկա ցույց տալու դեպքում դրվում է սեռականակերպ հայցական հոլով, իսկ անշունչ առարկա ցույց տալու դեպքում ուղղականակերպ հայցական ե դրվում: Իդական վերջավորություն ունեցող բառերի հայցական հոլովը սուսերենում ունի իր հատուկ վերջավորությունը: Այսպիսով սուսերենն ունի հայցական հոլով:

Մեր լեզուն, սակայն, ժամանակի ընթացքում կորցրել ե այդ հոլովի ձեռվ ու նույնացել ուղղական և, ինչպես արական հոլովի վերաբերյալ մասում կտեսնենք, երական հոլովին:

Մեր քերականներից վոմանք այս տեսակի ուղղականն էլ (կրող խնդիր) հայցական հոլով են անվանում, հիմնվելով վոչ թե բառի ձեր, այլ պաշտոնի (Փունկցիայի) վրա:

## 2. ՏՐԱԿԱՐԱ ՀՈԼՈՎ

Վաղն այս կապտերից ջրանցքների ափերին  
կիսվի յերկիրը մեր նորաբաղձ,  
Այս ջումք գետափներին, այս ջումք բարափներին  
Հյուր կատ յերկիր մի նորաբաղձը:  
(Մ. ԱՐՄԵՆ՝ «Ձրանցքների յերկաթե յերգը»)

**ՍԱՀՄԱՆՈՒՄ.** Տրական հոլովը նախադասության մեջ լինում է I. վորենիք բայի, կամ ածակտնի լրացում (գիրքը սպի Արամի և նեզ պես աշխատում ենա): II. վորենիք գոյականի լրացում (սեղանի վոտը): I. Բայի կամ ածականի լրացում լինելով՝ տրական ցույց ե տախի՝ 1. այն առարկան, վորին մի բան տրվան ե, ուղղվում է մի բան (գիրքը տվի Արամին:—Արամին նամակ

ուղարկեցի), 2. վարի սգտին կամ վնասին մի բան լինում է (Սուս-  
տի գիրք առա), 3. տեղի ու ժամանակը, ուր կամ լինում է  
մի բան (հրեն Կապուր սարթ կանգնած. — իս յեկա հունիսին),  
4. այն, առարկան, վոր կրում է իր վրա անցողական բայի գործո-  
դարյաւը (կրող խնդիր). որինակ՝ Հայկը տեսակ Մուկուչին:

Ծանոթություն.—Այս վերջին տեսակի տրականը  
քերականներից վոճանք անվանում են հայցական հոլով  
(ինչպես և կրող խնդրի ուղղականը): Այսպիսով կրող ա-  
ռարկան հայերենում, մերթ ուղղականի ձեռվ և մերթ ար-  
քականի ձեռվ, ըստ այդ քերականների, միենույն հայցա-  
կան կոչված հոլովն է զրում: Սակայն, ինչպես վերը տե-  
սանք, իրի «հայցականը» (ուղղականակերպ հայցական)  
ձեռվ նույնացել է ուղղականին, այդպես նաև անձի «հայ-  
ցականը» (տրականակերպ հայցական) ձեռվ նույնացել է  
տրականին: Այնպես վոր այս գեղգում ևս հայերենն առան-  
ձին հայցական հոլով ըստ ձեփ շունի:

Կրող խնդիրն ուղղականի, կամ տրականի ձեռվ դնելը  
կախված չե առարկայի շնչավոր կամ անշունչ լինելուց,  
ինչպես նաև վորոշ կամ անորոշ լինելուց, այլ խոսովի մը-  
տածողության լիդանակից: Յեթե խոսովը կրող առարկայի  
մտսին խոսում է իրեն իր մասին (վորպես պատասխան-  
ինչ հարցին), այս գեղգում առարկայի անունը դնում և  
ուղղական հոլովի ձեռվ. որինակ՝ փողոցում մի մարդ տե-  
սա (ինչ տեսա—մարդ). իսկ յեթե առարկայի մասին խո-  
սում է իրեն անձի մտսին (վորպես պատասխան ում հար-  
ցին), այս գեղգում առարկայի անունը դնում է տրական  
հոլովի ձեռվ (փողոցում մարդուն տեսա,—մարդ մարդու չի  
սպանի,—նա իր հայրն ել և կոբցրելունը մալրն ել):

II. Գոյականի լրացում լինելով՝ տրական հոլովը ցույց է  
տալիս 1. պատկանելություն, մի առարկա, վոր տեր և մի ուրիշ  
առարկայի (Զավենի գիրքը), 2. ամբողջը, վորի մի մասն և վերց-  
վում (շաբաթ կիլոն), 3. նութը, վորից կազմված ե առարկան  
(Խոսի գեղ), 4. տեղը, ուր կամ կամ լինում է մի բան (զլխի մա-  
ղերը), 5. ժամանակը, ուր կամ կամ լինում է մի բան (այսուրվա-  
դասը), 6. գինը կամ արժեքը (հիսուն կոտեկի միրդ), 7. վորա-  
կը կամ տեսակը (առաջին աստիճանի դարոց, նոր նեվի գըլ-  
լուրի):

Ծանոթություն.—Քերականներից վոճանք այս  
վերջին տեսակի տրականները, վոր գոյականի լրացում կամ  
վերապիր են լինում, հետեւ ոտար լեզուների քերակա-  
ռություններին՝ սեռական հոլով են անվանում:

Ոտար լեզուներում, որինակ՝ ոռուսերենում, կամ առան-  
ձին սեռական հոլով, վոր իր ձեռվ տարբերվում է տրական  
հոլովից (սակավ բացառությամբ): Հայերենում, սակայն, սե-  
ռական հոլով ըստ ձեփ չկա. այս հոլովն ել ժամանակի ըն-  
թացքում նույնացել է տրականին ու վերջինից տարբեր-  
վում է միայն իր կիրառումով, մինչդեռ բուն տրականը  
բայի կամ ածականի լրացում է լինում, «սեռական» տրա-  
կանը լրացում է լինում վորեւ անվան (գիրքը տվի մի  
մարդու—տրական,—այս մարդու գիրքը—«սեռական»):

### 3. ԲԱՌԱՌՈՎԱԿԱՆ ՀԱՅՈՎ

Յելան, գնացին՝

Աւալից—գեպի Կարպատները լուրթ,

Ու Կարպատներից—մինչեւ Երզում,

Ու Երզումից—Տրիպոլի, Հռոմ...

Բոլոր կողմերից հավաքված յելան...

Փալիս եր Մոռկովից դեղին...

Անցնում եր Նախրի Գրայից—

Բոնել եր Բաղդադի ուղին...

(Յեւ ԶԱՐՅԱՅԻ «Ամենապոեմ»)

- Ճանապարհորդը դուրս իկավ գյուղից:—Արշակը բոնեց  
Պետիկի քեվից (վճրտեղից):—Հորթը կապեցին սյունից (ինչից):
- Մարտ ամսից նրանք ալստեղ են (յԵրբանից):
- Նա գործից անտեղյակ մարդ եւ:
- Գրայից քահանա, ներսից՝ սատանա:—Գորս առարկայից

Թուրի եւ:

- Ամենից լով սովորողը նա յեւ:
- Սեթոն ցրտից հիվանդացավ:
- Մեզնից վոճանք չեն յեկեւ:
- Վորը վոսկուց ե պատրաստված, վորը՝ արծարից:
- Նա հրաժարվում է այդ անելուց:

ՍԱՀՄԱՆԱԲԻՄ. Բացառական հոլովը ցույց է տալիս գործադր-  
յան սկզբանակետը, այն առարկան կամ տեղի ու ժամանակը, վարից

առնվում, բաժանվում, հեռանում կամ ծագում, առաջ և զայխ մի բան:

#### 4. ԳՈՐԾԻՑԱՅՆ ՀՈԼՈՎ

Վորը կացնով, վորը փետով,  
վորը ձիով, վորը վոտով,  
վորն անդտակ, վորը բորիկ—  
Դեպի դուշման գյուղը մոտիկ!—  
(ՀՅՎՀ. ԹՈՒՄՌԱՆՑԱՆ «Մի կաթիլ մեղ»)

Տիճասանով ել են հետաքրքրվում, բյաղի գեով ել, կոռպերատիվի հաջողությամբ ել  
(ԱԿՍԵԼ. ԲԱՐԿՈՒՆՑ «Տրախոռի մաշին»)

Ծաղկոցով հարուստ և ծաղկաձորը, խոսը մարդարոյ և  
քշում, հովը ծփում և բուրմուհիով:  
(ԱՐԱՐՄ. «Ծաղկաձորի թաթիկը»)

Նա պիտի անցներ հալրենի գյուղով,  
Սոսենու ճերմակ անտառի միջից,  
Ուր լեղնիկներն են փախչում յերկուղով  
Հովից վայր ընկած տերեկի շնչից...  
(ՍՈՂՋՈՄՈՆ ՏԱՐՈՆՑԻ «Մայրը»)

1. Սղոցով, կացնով կորել—գանակով տաշել (ինչով);  
2. Ճանապարհով անցնել—լանջով բարձրանալ (վորտեպով):

3. Միքանի ժամով բացակայել—Գիշերով աշխատել;
4. Մրսով մարդ:—Շնորհենով տղա:—Շեկ մազերով (ինչպիսի):
5. Փազումով զյուղացի:—Լեզվով ճարտար:
6. Հինգ ոռոբլով ծախել:
7. Գետինը ձյունով ծածկվեց:
8. Նրա մեխով նույնիսկ չանցավ:—Վզովք փաթաթվել:
9. Դուք չարսով մնացիք:—Ամբողջ խմբով գնացինք:
10. Մսով կերպուր:—Քրնձոնով քաշովի:—Ցուղով փլավ:
11. Վերջին լուրերով՝ նա կզա:

ՍՈՂՄԱՆՈՒՄ. Գործիական հոլովք ցույց է տալիս այն առարկան, վորով կամ վորի միջոցով, իրենի գործիքով, կամ միասնությամբ կատարվում է մի բան:

#### 5. ՆԵՐԳՈՅՑԱԿՑՆ ՀՈԼՈՎ

Զրընգում և մեր յերկում ձեր բանակը հիմա հոծ:  
Դուք զվարթ եք ու ազատ խորհրդային մեր յերկում,  
Ձեր հանգերում հարազատ, ուր աշխատանքն և բերկում:  
Յեվ ձեր գործում ամեն որ, ձեր հոգսերում ու խաղում—  
Մեր նոր կյանքն և խլրտում, մեր գարունը ծիծաղում:  
Այս գարունը, վոր կյաներում չի վառի վոչ մի արև,  
Յեթե ինքներս անդուլ աշխատանքով չվառենք:  
Յեթե իրում այս մարտի, վոր լեռում և յերկում դեռ—  
Չգանա քույրը՝ մարտիկ, չդառնա կինը՝ ընկեր:  
Այս գարունը, վոր հիմա զընդում և մեր յերկում—  
Անդուլ պայտքանը և բերում, աշխատանքից և բերկում...  
(ՅԵ. ԶԱՐԵՆՑ «Այս գարունը»)

ՍՈՂՄԱՆՈՒՄ. Ներգոյական հոլովքը ցույց է տալիս այն առարկան, տեղը կամ ժամանակը, վորի մեջ մի բան կամ լինում է:

#### Գ. ԱԾԱԿԱՆ

§ 40. Մենք կանդ առանք գեղեցիկ և բարձր շենքի առջև:  
Մրկի պայծառ շողերով վողողգել և կանաչ դաշտավայրը: Թանձնածուխը լարձրանում և բարասեն գործարանի հսկայական ծինհլուցներից: Տան յերերգ հարկում յերեք սենյակ կա:

Գեղեցիկ, բարձր, պայծառ, կանաչ, թանձր, քարաշեն, լեռը բորդ, լերեք—բաները առարկաների հատկանիշներ են ցույց տալիս:

ՍՈՂՄԱՆՈՒՄ. Առարկայի հատկանիս ցույց տվող բառերն առական են կօշվում, վորոնց ցույց տված գաղափարներն անկախ գոյաւրյուն չւնեն կամ իրենի անկախ գոյաւրյուն ունեցող չեն մըտածվում: Ածականի արտահայտած գաղափարը մասմաս է վորեվի այլ գաղափարի հետ կապված. որ, գեղեցիկ յեվ բարձր տեեք կապակցության մեջ գեղեցիկ և բարձր բառերի արտահայտած գաղափարները մտածվում են տեեք բառի գաղափարի հետ կապված:

§ 41. Յես ունեմ մի լավ գրքի:—Այդ լավ գրքին մի ոռոք լի լիմ տվիլ:—Այդ լավ գրքից արտագրիր միքանի տող:—Այդ լավ գրքով պատրաստիր դասու:—Այդ լավ գրքում գրված է:—Այդ լավ գրքերը—այս լավ գրքերի...

ԿԱՆՈՆ. Ածականը, յերք գործ է ածվում գոյականի հետ, անփոխութիւն է մեռում, չի հոլովվում:

§ 42. Այդ մատիտներից մեծը տնւր, իսկ փոքրը թող մնաւ Մեծով կզրես, փոքրով չեմ զրի:—Մեծին փող կտամ, փոքրին չեմ տամ: Մեծերից մեկը վերցրնա:

ԿԱՆՈՆ. Ածականը, յերք գործ է ածվում առանց գոյականի, փոփոխութիւն է, հոլովվում է գոյականի նման, ընդունելով և (բ) հոդր:

### Ա. Թ. Ա. Պ. Ն. Ս. Ե. Տ. Տ. Ա. Կ. Կ. Ա. Խ. Ա. Բ. Ա. Բ.

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Արտագրեցեք յեվ ընդգծեցեք ածականները.

Մենք գրում ենք ու թանաքով սպիտակ թղթի վրա: Ընշղարձակ ու յերկար փողոցի յերկու կողմերում բարձր տներ են շարված: Վերին հարկից դեպի ստորին հարկը թեք սանդուղք և գրված: Թանձր խափարը լուսավորվում է ճրագի աղոտ լուսով: Ահա մի փոսկի ժամացույց՝ արձաթի շղթաւով: Պիռներական ակումբի թատերական գահին ճրեքշարթի որը հետաքրքրական ներկայացում կար: Սանիտարական հանձնաժողովը յերրորդ և չորրորդ խմբերի աշակերտներից և կազմված:

ՍՈՀՄԱՆՈՒԹԻՄ. Առարկայի վարակ (ինչպիսի լինելը) ցույց տվող ածականները կոչվում են վորակական ածականներ. որինակ՝ սիրութ մատիտ, կարմիր մատիտ, մեծ մատիտ, փոքր մատիտ, քարակ մատիտ, աժան մատիտ, բանգ մատիտ, լավ մատիտ, վատ մատիտ և ալլն:

§ 43. Այս շենքն ընդամենը յոր սենյակ ունի. յուրաքանչյուր սենյակ յերկու կամ յերեք լուսամուտ ունի: Զորորդ ու հինգերորդ սենյակների լուսամուտները փողոցի կողմն են...

Այս հատվածում ընդգծված յոթ, յերկու... չորրորդ, հինգերորդ... բառերը թվական ածականներ են:

ՍՈՀՄԱՆՈՒԹԻՄ. Առարկաների թիվ ու համար ցույց տվող ածականները բվական են կոչվում յեվ յերկու տեսակ են լինում.

ա. Քանակական ածական, վոր ցույց է տալիս առարկայի բանի կամ գորբան լինելը. որինակ՝ յերկու բաժակ, չորս մետր, հարյուր մարդ, տասներեկու գրիչ:

բ. Պատական ածական, վոր ցույց է տալիս, թե առարկան վարեվէ

շարքում հանիերորդ տեղն է բնաւմ. որինակ՝ յերերորդ հարկի չորրորդ սենյակը. հինգերորդ շարքի յերկորդ նստարանը:

ԿԱՆՈՆ. Դասական ածանցն է բորդ, վոր ավելանալով հանական բվականների վրա՝ սացվում է՝ յերկ-բորդ = յերկորդ, յեր-բորդ = յերբորդ, չոր-բորդ = չորբորդ, հինգ-բորդ = հինգբորդ, այսպես նաև՝ վեցերորդ, յոթերորդ, ութերորդ, իններորդ, տասն-բորդ, տասնեմեկերորդ, քսաներորդ և այլն:

### Հ. Ա. Բ. Յ.

Ինչու գասական թվականներից յերերորդ ու չորրորդ յերկու բորդ են գրվում, իսկ մյուսները՝ մի բորդ:

### ՏԵՂԵԿԱՆՔ.

Յերբորդ բառի արմատն են յեր, չորրորդ բառինը՝ չոր:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Կազմեցեք խոսքեր, վորոնց մեջ թվականներն առանց գոյականների գործածված լինեն, այսինքն՝ գոյականները գեղցված:

Ի՞նչ փոփոխություն կրեցին թվականները:

ՍՈՀՄԱՆՈՒԹԻՄ. Առարկայի անորու հանակ ցույց տվող ածականները կոչվում են անորու ածականներ. որինակ՝ մարդիկ, միքանի մարդ, բիչ հաց, սակավ ջուր, բավականին պաշար, վորեկի գիրք, բույր գրքերը և այլն:

ՍՈՀՄԱՆՈՒԹԻՄ. Այն անորու ածականները, վորոնք հարցականով են գործ ածվում, հարցական ածական են կոչվում. որինակ՝ բանի գիրք, վորեան ժամանակ, ինչպիսի սենյակ, հանիերազդ սենյակը և այլն:

ՍՈՀՄԱՆՈՒԹԻՄ. Ցուցական դերանունները դրվելով առարկայի անվան վրա՝ ցուցական ածականների հետակությունն են սահման. որինակ՝ այս գիրքը, այս գրիչը, այն տետրակը:

ԿԱՆՈՆ. Այն գոյականը, վոր ցուցական ածական ունի, վերջից ը կամ և հոգի և բնգունում. որինակ՝ այս գիրքը, այս գրիչը, այն գիրքը:

Դիտեցեք ստորակետի կիրառությունը ստորեւ ընդաւ հատվածներում պատահած ածականներից հետո.

1. Առ խոլ պատկերներ՝ օգեղ, այլանգակ, անհերեք շարքով, խուռներամ, անկարգ...

(ՀՅԴՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ և Առեցի Սարսաւ)

2. Յեզ իմ հոգին՝ անխալիս, հպատօ, աներեւ,  
կայանը իր՝ մոլորակներն և ընտրել...  
(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «ՌՊԱՀՈՎ»)
3. Մեր դպրոցի առաջին, յերկորոք, յերուզ խմբերը ներ-  
փեկի հարկումն են գտնվում:
4. Փառ գեղեցիկ արձանը նոր են կանգնեցրել:
5. Փառ առաջին բարձր տունը պետք է տեսնել:
6. Մեր այս պողպատչա սիրուն դանակը...

Յերբ են իրար հաջորդող ածականներն ստորակետով բա-  
ժանվում իրարից և յերբ չեն բաժանվում:

ԿԱՐՄԻՐ. Յերբ վորեվե զոյականի վրա դրված յեվ իրար նաջոր-  
դող ածականները նույն տեսակին են պատկանում, նույն հարցին  
պատասխանող ածականներ են, իրարից բաժանվում են ստորակետով:  
յերե այդ ածականներից վերջին յերկի միջնվ շաղկապ է դրված  
(իեվ, ու), այդ դիպիում ստորակետ չի դրվում: Որինակ՝ մեր դպրո-  
ցի առաջին, յերկրորդ յեզ յերրորդ բառերը խմբերը բառի վրա զբը-  
ված ածականներն են և բոլորն ել դասական ածականներ են, ուս-  
տի իրարից բաժանված են ստորակետով:

Տարբեր տեսակի ածականներ իրար հաջորդելու դեպքում  
ստորակետով չեն բաժանվում: Որինակ՝ մեր այս պողպատչա սիր-  
ուն դանակը՝ կապակցության մեջ մեր, այս, պողպատչա, սիրուն  
բառերը դանակը բառի վրա դրված տարբեր տեսակի ածական-  
ներ են, մեր—ստացական ածական և և պատասխանում և ո՞ւմ  
հարցին, այս—ցուցական ածական և և պատասխանում և վո՞ր  
հարցին, պողպատչա—դանակի ինչ նյութից պատրաստված լի-  
նելն և ցույց տալիս, իսկ սիրուն—վորակական ածական և և  
պատասխանում և ի՞նչպիսի հարցին: Տարբեր տեսակի ածական-  
ներ լինելով՝ այդ բառերն իրարից ստորակետով չեն բաժանվում:

Դիտեցեր ածականների դասավորությունն իրենց գոյական-  
ների նկատմամբ.

Կապույտ, կարմիր, գեղին մատիտներ. — լավ թուղթ. — յեր-  
կու մարդ, — յերուզ նստարանը, — այս տղան. — ինչպիսի թուղթ,  
շատ ծառեր. — կոտրած բաժակ:

ԱՍՀՄԱՆՈՒՄ. Ածականները սովորաբար իրենց զոյականից ա-  
ռաջ են դրվում. այսպիսով ածական նախադաս է լինում:

Դիտեցե՞ք ածականների դասավորությունն իրենց գոյա-  
կանների նկատմամբ՝ ստորեւ բերված որինակներում:

Բայլշեկիկ և Շիր-կանալը. — մի աժդանա հետիաբային. — վայ-  
րերը լերկ ու բարբագ. — հոգաը քաշող ամեն մարդի. — ցանցել է  
իր արյունատար յերակներով համատարած (Հ. ՀԱԿՈԲՅԱՆ):

Խորհրդային ազատ առավոտը խճուն. — նորից հայացքներ  
տա. — այդ մեր բանակն է կուռ, պատշաճ ավատանքի. — մեր  
կրծքերը յերկար. — մեր ձեռները կոչ. — մեր ճակատը հպատ (Ա.  
Ա.ԶԱՅԱՆ):

ԱՍՀՄԱՆՈՒՄ. Ածականը նանախ կարող է գոյականից նետ  
դրվել, այսպիսով՝ ածականը լիտապաս է լինում: Այս տեսակի դասա-  
վորությունը ցոյնում է կողմում: Շրջումը մեծ մասամբ վոտանավոր  
դրվածքների մեջ և գործածվում, սակայն արձակ գրվածքներում  
ել կարող է գործածվել:

Շրջումները կարելի լի ուղղել—բառերի սովորական շարա-  
գասուրյուն ստեղծել. որինակ՝ վերեկի շրջումները կարելի լի  
ուղղել հետեւալ կերպ.

Մի հետիաբային աժդանա. — լերկ ու բարբագ վայրերը. —  
ամեն մարդի հոգաը քաշող. — համատարած յերակներով. — խճուն  
առավոտը. — մեր յերկար կրծքերը. — մեր կոչ. ձեռները. — մեր  
հպատ ճակատը:

#### ՀԱՅԿԱԼԻԹՅԱՆ Ս.ՍՑԻԱԾ.Ն.ՆԵՐ

§ 44. Մեր դասարանն ավելի մեծ դասարան և, քան ձեր  
դասարանը: Այս դասարանը դպրոցում ամենամեծ դասարանն  
է: — Ավելի մեծ, ամենամեծ—հատկության աստիճաններ են ցույց  
տալիս:

ԱՍՀՄԱՆՈՒՄ. Հատկության աստիճանները յերկու լին:

ա) Բաղդատական, յերբ հատկությունը համեմատվում է մի  
այլ առարկայի հատկության հետ յեվ մեկի մեջ ավելի կամ պակաս  
է նկատմամբ. որինակ՝ ավելի լավ, ավելի վատ, ավելի մեծ, պա-  
կաս խելոք:

բ) Գերագրական, յերբ համեմատության մեջ մի առարկայի  
հատկությունը գերազանցում է այլ առարկայի հետ հատկությամբ  
համեմատվող բոլոր առարկաների հատկությանը. որինակ՝ ամենալավ  
(ամենից լավ), ամենավատ (ամենից վատ) և այլն:

Յերբ առարկայի հատկությունը չի համեմատվում և չի  
առատկացվում, ածականը դրական աստիճան է զրվում:

Յերբ առարկայի հասկուրյունը բարձրացվում կամ իջեցվում է առանց համեմատության, հասկուրյան ասինանը սաստկական է կոչվում. **որինակ՝ խիստ ցուրտ,** չափազանց տաք:

**ԿԱՆԱՐԾ.** Դերադրական ասինանն արտահայտող բարդ բառերի յերկու բաղադրիչ մասերը (**ամեն բառով բարդված**) միասին են գրվում, իբրև մի բարդ բառ. **որինակ՝ ամենալավ,** ամենամեծ, բայց՝ ամենից լավ, ամենից մեծ:

**ԿԱՆԱՐԾ.** Յերբ գերադրական ասինանն արտահայտող բարդության առաջին բաղադրիչ մասը (**ամեն**) դրվում է ձայնավորով բակսվող բառի վրա, հակառակ հոդակապի սովորական կանոնի՝ ահոդակապ դրվում է. **որինակ՝ ամենաազնիվ,** ամենաառարտի, ամենաընդունակ և այլն:

**§ 45.** Յես յերեք տեսակի մատիտ ունեմ սև, կարմիր և կապույտ: **Ամենից շատ սեվով եմ գրում,** կարմրով ու կապույտով նկարում եմ: **Ակառը կարմիր մատիտով վարդ նկարիցի,** իսկ կապույտ մատիտով՝ մանուշակ:

Հ Ա. Բ Յ.

Յերբ են ածականները հոլովվում, յերբ չեն հոլովվում:

Ի՞նչպես են հոլովվում ածականները:

**ՍՈՀԱՄԱՆՈՒՄ.** Յերբ ածականները դրվում են գոյականի հետ, առնվտիու են մեռում (**բարի մարդ,** բարի մարդու, բարի մարդկանցից). յերբ գոյականը զեղչվում է, չի դրվում, եթա ածականը, գոյականարար գործածիլով ու համապատասխան հոդ ընկունելով (**ս, դ, ե, (բ),** հոլովվում է (**բարի, բարու, բարիներից.—կարմիր,** կարմրիս, կարմրներիցս):

Ածականների հոլովվումը նման է գոյականների հոլովման:

### Գ. Բ Ա Յ

#### 1. ԹԵՍ, ԹԻՎ, ՅԵՎ, ԴԵՎ, ԴԵՄ

**§ 46. 1.** **Մայրս վերջին անդամ գրկեց ինձ, համբուրեց և պատց.**

Գ Յ Ա Յ Ս բարով...

Հայր յիշմբուրեց... Յես գնում եիի մի արդիւնաբերական բաղադր, ուր ձգում եիթ ամենից:

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Դեղի պանդիստիլուն»)

**2. Յես Եկարում եմ, գու կարզում ես, իսկ Սիրուշը խաղում ե:** **Փոքրիկ վաշիկը իբվանգ ե.** Նա պատկած է անկողնումը Գեկեց, համբուրեց, գնաս, գնում եիթ... բայեր են:

**ՍՈՀԱՄԱՆՈՒՄ.** Բայ կոչվում են այն բառերը, վորոնք ցույց են տալիս, թե այս կամ այն առարկան ի՞նչ է անում, ի՞նչ է լինում, ի՞նչ դրարյան մեջ է, ո մենակ կարող են խոր կազմել:

Բացի բայից, մյուս բառերը մենակ խոր կազմել չեն կարող:

**ԳԱՐՄՇԱԿԱՆ ՍՇԽԱՏԱՆՔ.** Արտագրեցներ յեվ ընդգծեցներ բայերը.

Լույսը գեռ նոր եր բացվել, յերբ յես քնից աբթնացա, ըզդեստներս հագտ ու լվացվեցի: Թելը պատրաստ եր: Նախաճաշեցի, զրբերս վերցրի, քայլերս գեպի զպրոց ուղղեցի: Աշակերտները խաղում եյին բակում: Սպասում եյի, վոր զանգը ճնչի, վորից հետո դաստրան հավաքվեյինք, ուսուցիչը դար, պարապմունքն ակսվեր:

**ՍՈՀԱՄԱՆՈՒՄ.** Բայերը յերկու թիվ ունեն—յեզակի և հոգնակի: Յեզակի բայը ցույց է տալիս մի առարկայի կատարած գործուրյունը կամ դրարյունը, հոգնակի բայը՝ մեկից ավելի առարկաների:

**§ 47.** Յես գրում եմ. գու գրում ես. Եա գրում ե: Մենք կարգում ենք. գում կարգում եք. Երանք կարգում են:

**ՍՈՀԱՄԱՆՈՒՄ.** Յես (ինիս), գու (ինիդ), Եա (ինիր), Մենք (ինիներ), գում (ինիներդ), Երանք (իրենի) բայի արտահայտած գեմեներ են, վորոնցով անող կամ յեղող առարկայի գաղափարն է արտահայտվում:

Դեմքից անբաժան է բվի գաղափարը:

Յես—առաջին գեմք կամ խոսող անձը.

Գու—յերկրորդ գեմք կամ խոսողը.

Եա—յերրորդ գեմք կամ վոչ խոսողը և վոչ խոսակիցը.

Մենք—առաջին գեմք կամ խոսողը և իր հետ յեղածները.

Գում—յերկրորդ գեմք կամ խոսակիցը և նրա հետ յեղածները.

Արանք—յերրորդ գեմք կամ վոչ խոսողները և վոչ խոսակիցները:

## 2. ԲԱՅԻ ԺԱՄԹՅՆ ԱՎԱՆԵՐԸ

§ 48. Աշակերտը կարդում է (այժմ, խոսելու բոպեյին):—  
Աշակերտը կարդում էր, կարդալու լեռ, կարդացել էր, կարդացած  
էր, կարդաց, կարդար, կկարդար, պիտի կարդար (անցյալում,  
խոսելու բոպեյից առաջ):—Աշակերտը կարդալու լեռ, կարդա, կկար-  
դա, պիտի կարդա (հետագայում, խոսելու բոպեյից հետո):

ՍՈՀՄՈՒՆՈՒՄ. Բայի արտահայտած գաղափարներից մեկն է  
հայելի ժամանակը, վոր ցույց է տալիս, թե բայի յեղելուրյունը  
չերք է կատարվում:

Բայը յերեք ժամանակ ունի.

1. Կերկա ժամանակ, վոր ցույց է տալիս, թե յեղելուրյունը  
կատարվում է խոսելու րոպեյին (կարդում եմ, գրում եմ):

2. Անցյալ ժամանակ, վոր ցույց է տալիս, թե բայի յեղելու-  
րյունը խոսելու րոպեյից առաջ է կատարվել, կամ առաջ եր կա-  
տարվում (յես գնացի, գնում եմ):

3. Ապառնի ժամանակ, վոր ցույց է տալիս, թե բայի յեղե-  
լուրյունը խոսելու րոպեյից հետո յե կատարվելու (գնալու յեմ, գը-  
նամ, կզնամ, պիտի գնամ):

Բայերը փոփոխվում են դեմքով, թվով, ժամանակով:

Ցույց տվեք բայերի ժամանակները հետեւյալ հատված-  
ներում.

1. Ամպի տակից ջուր և գալիս,  
դոշ և տալիս, փրփրում,  
են հւմ՝ յարն և նստած լալիս  
հոնգուր-հոնգուր են սարում:

2. . . . Ուսին  
աղջիկ եր ինձ պես,  
մեռում եր յարին,  
ու չեկավ նա տես...  
ինդար դողալով՝  
անհույս կուացավ,  
դարդից չորացավ,  
ուռենի գարձավ.

3. Յես կվառվեմ, հուր կգառնամ,  
յես կհալվեմ, ջուր կդառնամ:  
(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «ԱՆՈՒՅ»)

## 3. ԲԱՅԻ ՅԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Ա. Հրամայական յեղանակ

§ 49. 1. Արամ, առավոտան շուտ վե՛ր կաց, լվացվի՛ր, նա-  
խաճաշդ արա՛, վեցըրու մեր զամբուռղը և զնա՛ շուկա, ճաշի հա-  
մար անհրաժեշտ մթերքներ զնի՛ր, տուն բեր. ճանապարհին մի՛  
ուշանական, սրանրա հետ յերկար մի՛ խոսի: Հետո Շուշի հետ  
զնացե՛մ դպրոց, դասից յերբեք մի՛ ուշանակ, դասից հետո տուն  
վերապարձե՞մ: Գալիս, լրագրի այսորվա համարը վեցըրե՛մ: Ասած-  
ներս մի՛ մոռանակ, ճշտությամբ կատարեցե՛մ:

2. Վոչխարն են սարով  
ոռ՛ւ տուր, տո՛ւն արի,  
փախի՛ր գիշերով  
ու թագուն արի:  
(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «ԱՆՈՒՅ»)

3. Բնկեր բանվորներ, բաց արե՛մ ձեր աչքերը, նայեցե՛մ  
ձեր շուրջը, գոնե մի հայացք զցեցե՛մ այս քաղաքի փողոցների  
վրա:

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Կապիտալի աշխարհում»)  
4. Զա՛րկ, թմբուկ, զա՛րկ ուժգին, փչի՛ր փող, սեփորի՛ր,  
են բափկեմ զաներից ինչպես զորք մուկդին  
յեկեղեցին—հեռացե՛մ, աղոթողներ,  
դպրոցները—հեռացե՛մ, աշակերտներ:  
(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Զարկ, թմբուկ»)

Այս հատվածների մեջ բոլոր բայերը հրամայական յեղա-  
նակով են զրված:

Յեղանակը բայի արտահայտած գաղափարներից մեկն է,  
վորից յերեվում է. թե խօսողն ինչ կերպ է խոսում յեղելու-  
րյան մասին: Աւրեմն բայի արտահայտած գաղափարներն են՝ թիվ,  
զեմք, ժամանակ, յեղանակ ու յեղելուրյուն:

ՍՈՀՄՈՒՆՈՒՄ. Հրամայական յեղանակը ցույց է տալիս, վոր  
խոսողը խոսակցին հրամայում է կամ հորդորում մի բան անելու  
կամ շանելու. վերջին տեսակի հրամայականը (մի խոսի կամ մի խո-  
սիր) արգելական հրամայական է կոչվում: Հրամայականի վեա  
հանախ դրվում է նայել մի մեղմական մակրայր, վոր չպիտի օփե-

քել մի՛ արգելական մակրայի նես. որ՝ մի գնա, նրան ասա՞ թողքա:—Մի մերժական մակրայը շետ չունի:

Հրամայական յեղանակն ունի յեզակի յել հոգնակի թիվ ու միայն մի դիմք (2-րդ գեմք կամ չխոսակիցը), վորովինետի հրամայել կարելի յէ միայն խոսակիցին կամ խոսակիցներին:

ԿԱՆՈՒՆ. Հրամայական յեղանակով արտահայտված բայի վերջին փառնի ձայնավորի վրա շետ ե դրվում. որ՝ գնա, ստացիր, հարցուն:

ԿԱՆՈՒՆ. Սրգելական հրամայականի շետք դրվում է արգելական մի բառի ձայնավորի վրա շետ ե դրվում. որ՝ մի գնա, մի ստանա, մի հարցուն:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱԾԽԱՏԱՆՔ. Հետեվյալ նախադասություններում հրամայական բայերը փոխեցե՛ք արգելական հրամայականի վոչ բառը բայերի վրա դնելով. որ՝ կեր ու կշտացիր.—վոչ կեր, վոչ կշտացիր, կամ վոչ կեր, վոչ ել կշտացիր:

Առ ու գնա: Հասիր, տես, ստացիր ու բեր: Գրիգորին ել ասա, Տիգրանին ել, Հովհաննեսին ել: Հաց ել կեր, գործդ ել արա: Արամ, աթոռը մոտեցրու, վրան բարձրացիր, նկարը պատճենին լին տուր:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱԾԽԱՏԱՆՔ. Գտեք հետեվյալ բառերի հրամայականը յեվ արգելականը.

Գնալ, մնալ, կարգալ, գրել, որեր լերգել, նկարել, զարմանալ, ստանալ, մեծանալ, հապատանալ, կոտրատել ջարդոտել փշտել, մոտեցնել հարցնել, կորցնել, փախցնել թռչել, թոցնել սառչել, սաղցնել, տեսնել, հասնել, մտնել, լենել, տանել ուտել, կարգացնել, կոտրգել, հագնվել, սանրվել գալ, տար լար պար գալ, թափ տալ, սիրտ անել, վեր կենալ, ականջ դնել ծափ տալ

Բ. ՅԵՆԹԱՐԱԿԱՆ յեղանակ

§ 50. 1. Այս շենքի բարձրությունը մոտավորապես հինգ մետր կլինի. յերկարությունը տասնհինգ մետր կլինի: Այս շենքի դահլիճը հարյուր հրուսն մարդ կտանի: Մեր ընթերց արանում մեր բոլոր լրագրերը կգտնեն:

2. Զեզ կիայինեն ու կծաղրեն, կատեն ու կիալածեն, ձեզ համար մտրակներ, զնդակներ ու բանտեր կպատրասեն: (ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Կապիտալի աշխարհում»)

3. Գլխատության մոայլ ժամին գլուխդ վայր կրերեն, և զանգերը կղողաճշեն, և դաշունը կփաղփաղի, ու մկանունք կաղագակեն և կլինի շքեղ հանդես, մեծապայծառ տոն ու հանդես կարմիր տրյան ու մետաղի: (ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Թլուխը»)

**Այս հատվածներում բոլոր բայերը գրված են յենթարական յեղանակ:**

**ՍԼԱՄԱՆՈՒՄ.** Յենթարական յեղանակը ցույց է տալիս, վոր խոսողը բայի յեղեյուրյան մասին յենթարաբար և արտահայտվում, յենթարում ե կամ կասկած ե հայտնում:

ՅԵՆԹԱՐԱԿԱՆ յեղանակով գրած բայլը միշտ ապառնի է և ունի ապառնի ներկա և ապառնի անցյալ: Ապառնի ներկան ցույց է տալիս մի յեղելություն, վոր ներկալի նկատմամբ ապառնի է. որ՝ նա կգնա: Ապառնի անցյալը ցույց է տալիս մի յեղելություն, վոր անցյալի նկատմամբ ապառնի է. որ՝ նա կգնար: ՅԵՆԹԱՐԱԿԱՆ բոլոր գեմքերն ել ունի:

**ԿԱՆՈՒՆ.** Յենթարականի վրա դրվող կ-ն բնդունված է բայլին կապած գրել—կգնա, կասի:

Յենթարական յեղանակը, բացի իր բուն նշանակությունից, կարող է ցույց տալ՝

1. «Առածական ներկու»—առածների և ասացվածների մեջ. որ՝ ձուկը ծովում կմեծանա, կուշտը քաղցածին մանր կըրդի:

2. Առվորուրյան ներկա յեվ անցյալ. որինակ՝ ամեն որ վեր կկենա ու կլվացվի, նա լավ կերպուր կեփի:

3. Կրկնուրյան ներկա. որինակ՝ որենը հինգ անդամ կղնա, կզա:

### ՊԱՏԿԵՐ

**ՅԵՆԹ. ապ. ներկա**

յես կասեմ մենք կասենք	յես կասելի մենք կասելինք
դու կասես դուք կասեք	դու կասելիք դուք կասելիք
նա կասի նրանք կասեն	նա կասեր նրանք կասելին

**ԿԱՆՈՒՆ.** Յենթարականի բացասական ձեվը կազմելու համար զոր են ածիլում վոչ, չ. որ՝ վոչ կղնամ և վոչ կասեմ, կամ չեմ գնա և չեմ ասի:

## գ. Հարկադրական յեղանակ

§ 51. Դուք բոլորդ վաղը պպոց պետք ե զար: Դպրոցի ճակատը զարդարված պետք ե լինի: Ամենքս կարգ պետք ե կանգնենի: Բոլորս պետք ե մասնակցենք առնական թափորին: Վոչ վոք չպետք ե բացակայի: Վոչ պետք ե խոսենք, վոչ օտքից գուրուգաք, վոչ իրար իրեն: Արինակելի կարգապահություն պետք ե լինի: Թափորն առափոտյան ժամի տասին ոյետք ե սկսվի:

Այս հատվածում բոլոր բայերը դրված են հարկագրական յեղանակով:

ՍՈՆՄԱՆՈՒՄ. Հարկագրական յեղանակը գույց ե տալիս, զար խոսողը յեղելուրյան մասին խոսում ե իրենվ անհրաժեշտ բանի մասին, կամ անհրաժեշտ ու ստիպողական ե գտնում, զար բայի յեղելուրյունն այս կամ այն կերպ լինի:

Հարկագրական յեղանակով դրված բայը միշտ ապառնի յէ և նույնպես ունի ապառնի ներկա և ապառնի անցյալ ձեերը. որ՝ յես պետք ե գնամ. յես պետք ե գնայի. — յես չպետք ե գնամ. յես չպետք ե գնայի. — յես վոչ պետք ե գնամ և վոչ ել պետք ե տեսնեմ. — յես վոչ պետք ե գնայի և վոչ ել պետք ե տեսնելի: — Ունի բոլոր դեմքերը:

ԿԱՆՈՒՆ. Հարկադրական յեղանակի վրա դրվում ե պետք ե կամ պիտի բառերից մեկն ու մեկը, իսկ յերեւ բայը բացասական ե, այդ դեպքում չպետք ե կամ չպիտի. որ՝ չպիտի գնամ, չպետք ե գնամ. կարելի յէ նաև՝ պիտի չդնամ, պետք ե չդնամ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Կազմեցեք ինքներդ հարկադրական ապառնի ներկայի յեվ հարկադրական ապառնի անցյալի խոնարհման պատկերը թե դրական յեվ թե բացասական:

## դ. Ըղական յեղանակ

§ 52. 1. Աշնու, զնաս Ռնիկի մոտ, ասես՝ գիրքը տա, վոր զասս պատրասեն. թե զու չկարոզանա, խնդրեմ Մինասին ասես՝ նա բերի. զե, սիրելիս, չమոռանա. միտք լավ պատես: Բան ե՝ թե Մինասին ել չեսնես, ինձ իմաց անես:

2. Կորչեմ բեզար, դադարգուն,  
քար-սարեսար, դադարգուն,  
մեռեմ, պրծեմ ևս որից,  
բալքի առնեմ դադար, քուն,  
... վայ թե հանկարծ իմանա,  
յես ազաւվեմ ևս ցավից,  
աչքը լալով նա մնա:  
(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Անուշ»)

Այս հատվածում բոլոր բայերը դրված են ըղական յեղանակով:

ԱՅԼՄԱՆՈՒՄ. Ըղական յեղանակը ցույց ե տալիս, զար ասողը կամ խոսողը ցանկանում ե՝ այս կամ այն յեղելուրյունը կատարի, լինի. Բղջականն իր նշանակուրյամբ հակառակ ե հրամալական յեղանակին. որ՝ Ըղական—գնաս՝ ջուր բերես, հրամայական—գնամ, ջուր բեր:

Ըղականը հաճախ իր հետ կարող ե ունենալ ցանկություն արտահայտող մի բառ. որինակ՝ յերանի, գոնե, ուր ե թե և այն: Ըղականի գրա հաճախ դրվում ե մի մեղմական մակրայը (ՀՀԸ-փոթել մի՝ արգելականի հետ.) որինակ՝ մի գնաս, նրան ասես:

Ըղական ինդանակն ունի ապառնի նշանակություն և լիբր-կու ձև՝ Ըղական ապառնի ներկա, ըղական ապառնի անցյալ (որ՝ գնամ, գնայի): Ունի բոլոր դիմքերը:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. ա) Խնքներդ կազմեցեք ըղձա-

կան ապառնի ներկայի յեվ ըղձական ապառնի անցյալի լրիվ

պատկերը, վորեվի բայ վերցնելով իբրեկ որինակ, ձեր կազմած

պատկերը գրի առեք:

բ) Յուց տվեք, թե ըղձական, յենթադրական յեվ հար-

կադրական յեղանակների մեջ ձեվական յեվ իմաստի ինչ տար-

բերություններ կան. (որ՝ տաս ոռոքվ լինի, տաս ոռոքվ կի-

քի, տաս ոռոքվ պիտի լինի):

գ) Կազմեցեք վորեվի բայի բացասական ըղձականի պատ-

կերը՝ չ, վոչ ավելացնելով այդ բառի վրա:

Ըղականի վմը ձեն և գործածված հետևյալ վոտանավոր-

ներում:

- Ա՛խ, յես յերանի  
կայծակ լինելի,  
վորոտ-ճայթյունով  
մոայլ ամպերից  
ծայրենի ըմբռոստ,  
զարկենի ուժգին,  
պատոենի խավար  
կամարը յերկնի...  
(ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՑԱՆ՝ «Բանաստեղծություններ»)

- Կուզելի՝ հենցեր իմ փողն ահարկու,  
թեղացներ սրտեր յուր ձայնով հուժկու,  
քնածը զարբեր, թուլին արփանա՝  
կովելու մինչ մա՞ս սուրբ գործի համար:  
(ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՑԱՆ՝ «Բանաստեղծություններ»)

## Ե. Սահմանական յեղանակ յեվ նրա ժամանակները

§ 53. Այսոր արել պայծառ ժամում ե. ամեն ինչ վոզոդ-  
ված ե նրա շողերով: Առավոտան դեռ շատ վաղ վեր եմ կացել.  
ահա նախաճառում եմ, վորից հետո գնալու յեմ դպրոց: Ժամի-  
յոթը խփեց: Քայլերս ուղղում եմ դեպի դպրոց:

Այս հատվածում բոլոր բայերը դրված են սահմանական  
յեղանակով:

**ՍՈՀՄԱՆՈՒՄ.** Սահմանական յեղանակը ցույց է տալիս, վա-  
տառը յեղելուրյան մասին խոսում է իրեն իրական, նիւթ մի բա-  
նի մասին: Այսպիսով սահմանական յեղանակը խիստ տարբերվում է  
բոլոր մյուս յեղանակներից, վորոնք կամ յենրադրուրյուն ու կաս-  
կած, կամ անհրաժեշտուրյուն, կամ ցանկուրյուն յեվ կամ հրաման  
են արտահայտում:

§ 54. 1. Յես կարգում եմ, դու գրում ես, նա նկարում ե,  
Մինք կարգում ենք, դուք գրում եք, իսկ նրանք նկարում են.

### 2. Անլուկի վելում ե

պղտոր ջուրը Դերետի,  
նրա ափին կանաչում ե  
մենակ շերիմն իդիթի...  
Ու հոսում ե գիշեր-ցերեկ  
արցունքն անբախտ աղջկա,  
բայց իր սիրած տղեն յերեք  
չկա՛, չկա՛ ու չկա՛...

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Անուշ»)

Այս հատվածներում բոլոր բայերը դրված են սահմանական,  
յեղանակի ներկա ժամանակ (անկատար կամ բուն ներկա):

**ՍՈՀՄԱՆՈՒՄ.** Անկատար ներկան (կամ բուն ներկան) ցույց  
է տալիս մի յեղելուրյուն, վոր տեղի յև ունենում խոսելու բոպեյին  
յեվ դեռ տարանակում ե. Ունի բոլոր դեմքերը:

Անկատար ներկան բացի իր բուն նշանակութիւնից, կա-  
րող ե ցույց տալ՝

1. «Մեսակատար ներկա», ամեն ժամանակի համար ընդու-  
նելի ճշմարտություններ. որ՝ Յերեսանը քաղաք ե..., յերկիրը  
պտտվում ե արեկի շուրջը:

2. «Առածական ներկա», —խոսք ու կարծիք՝ ամեն ժամա-  
նակի համար արժեք ունեցող. որ՝ ճակերն աշնանն են համբում:

3. «Սովորության ներկա», —որ՝ հարսանիքներն աշնանն  
ու ձմեռն են անում:

4. «Կրկնության ներկա», —որ՝ նա առավոտները լողանում ե:

5. «Պատմական ներկա», —յերբ անցած բանը ներկայով  
ենք պատմում, վոր կենդանի լինի. որ՝ վերցնում ե իր զորքը,  
գնում կովի դաշտ, ջարդում թշնամուն:

6. «Նկարագրական ներկա», —որ՝ ծառերն են: Ծառերի  
տակը՝ հողն եւ չողի տակ մարդիկ են (Մ. ԱՐՄԵՆ):

ԿՈՆՈՆ. Անկատար ներկայում եմ, ես, ե, ենք, եք, են, —  
միևս առանձին են գրվաւմ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Ինքներդ կազմեցեք վորեվե բա-  
յի անկատար ներկայի պատկերը, դրական յեվ բացասական:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Գտե՛ք հետեւյալ բառերի ան-  
կատար ներկան:

Խոսել տանել նստել նստեցնել, հարցնել փախչել, փախ-  
ցընել ուտել գալ տար լար ջարդվել, կտրվել, թափ տար պար  
գալ, սիրտ անել, լինել:

§ 55. Յես գենում եիթ դպրոց, դու գալիս եիթ դեպի տուն.  
Աշոտը քեզ հետ եր: Մենք գենում եիթն, դուք գալիս եիթ, նը-  
րանք յեղում եիթն:

«Ատում եր Հասոն ժայռերի գլխին: Յեվ նվազում եր:  
Վոչխալսերը լսելուն պես՝ բոզնում եիթն ամեն ինչ, անցնում  
ամեն բան, գալիս, Հասովի շուրջը հավաքվում:

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ՝ «Լուր-դա-լուր»)

Այս հատվածներում բոլոր բայերը դրված են սահմանական  
յեղանակի անկատար անցյալ ժամանակ:

**ՍՈՀՄԱՆՈՒՄ.** Անկատար անցյալը ցույց է տալիս մի յեղելու-  
րյուն, վոր սկսված է յեղել անցյալում (խոսելու բոպեյից տաքա)  
յեվ չի վերջացել, նւնի բոլոր դեմքերը:

ԿՈՆՈՆ. Անկատար անցյալում եիթ, եիթ, եր, եիթն, եիթ,  
եիթն —միևս առանձին են գրվաւմ:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Ինքներդ կազմեցեք վորեվե բա-  
յի անկատար անցյալի խոնարհման պատկերը, դրական յեվ բա-  
ցասական:

Խոսքեր կազմեցեք, վորոնց մեջ անկատար անցյալը ցույց  
տա՞:

1. «Սովորության անցյալ».

2. «Կրկնության անցյալ»:

§ 56. Մեր կոլեկտիվի վորոշման համաձայն, վաղը մենք գնալու յենք եքսկուրսիա: Մեզ հետ լինելու յև մեր ուսուցիչը: Հետազոտելու յենք կաշվի գործարանը: Ուսուցիչը ցույց է տալու և բացատրելու յէ կաշի պատրաստելու ձևերը: Մեր եքսկուրսիան շարադրության նյութ է լինելու:

Այս հատվածում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի ապառնի ներկա ժամանակ:

ՍՊՀՄԾԱՆՈՒՄ. Սահմանական յեղանակի ապառնի ներկան ցույց է տալիս մի յեղելուրյուն, վոր խոսելու վայրկյանից հետո յեղանակի իրենի իրական մադրուրյուն, վօրուում կամ համոզում, հակառակ յենքադրականի:

ԿԱՆՈՆ. Ապառնի ներկայում՝ յեմ, յես, յե, յենք, յեք, յեն առանձին են գրվում: Յ ավելանալու պահնառն այն է, վոր նախորդ բառը վերջանում է ձայնավորով (գնալու յեմ):

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Ինքներդ կազմեցեք անկատար անցյալի խոնարհման պատկերը՝ դրական յեվ բացասական:

§ 57. Յերեկով վատ յեղանակի պատճառով մեր հետաձըզված եքսկուրսիան լինելու յեր առաջոտան: Մասնակցելու յեր մեր ամբողջ կոլեկտիվը: Բոլորս մեր հուշատեարերը վերցնելու ելինք մեզ հետ: Հետազոտելու ելինք կաշվի գործարանը և ապաշարադրության նյութ ելինք դարձնելու:

Այս հատվածում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի ապառնի անցյալ ժամանակ:

ՍՊՀՄԾԱՆՈՒՄ. Սահմանական ապառնի անցյալը ցույց է տալիս մի յեղելուրյուն, վոր տեղի յեր ունենալու անցյալում իրենի իրական մադրուրյուն կամ համոզում, վօրը, սակայն, զանազան պատճառներով տեղի չի ունեցել. Ունի բոլոր դեմքեր:

ԿԱՆՈՆ. Ապառնի անցյալում ելի, ելիր, եր, ելինք, ելիր, ելինք գրվում են առանձին:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Ինքներդ կազմեցեք անկատար անցյալի խոնարհման պատկերը՝ դրական յեվ բացասական:

§ 58. 1. Պետքու, այսոր դասից ուսուցիչը ես. զանզը վաշուց սփել ե. Ընկերներդ հավաքվել են դասարան, ուսուցիչը ներւ ե մտել, դասն սկսվել ե:

2. Յեվ դարերը, վոր անցել են մեր նալիրյան վոշոտ ձամպով, կարծես վոչինչ չեն հարցել գալիքների թափին տենդոտ. — անց են կացել նրանք խոժոս ու յեն նայել յերբեք

ու բողել են հյուղեր վոշոտ ու սրտամաշ մշուշ ու մեզ,  
ու բողել են ժամեր անդեմ ու զանգերի լիրազը ծեր,  
ու բողել են թոփչք անթե ու հողագույն դիմադծեր:  
(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ: «Գյուղի յերգը»)

Այս հատվածներում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի վաղակատար ներկա:

ՍՊՀՄԾԱՆՈՒՄ. Վաղակատար ներկան ցույց է տալիս մի յեղելուրյուն, վոր ավելի վաղ է կատարվել, բան խոսելու բողելին կատարվող մի ուրիշ յեղելուրյուն (գու այս գիրքը նոր ես կարդում, իսկ նա արդեն կարդացել ե):

ԿԱՆՈՆ. Վաղակատար ներկայում՝ եմ, ես, ե, ենք, եք, են— գրվում են առանձին:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Ինքներդ կազմեցեք վորեվերայի վաղակատար ներկայի խոնարհման պատկերը՝ դրական յեվ բացասական:

§ 59. 1. Սընկը գեռ չեր ծագեն մեր կոլեկտիվը հասել եր սարի ստորոտը: Ընկերներից մի քանիսն արդեն սարն ելին բարձրացել, տեղ ելին բներել:

2. Ընկերը հալածել խեղդել ելին նրան, անողորմ կերպով բղկտել նրա մորթին, մանուկները քարկոծ ելին արել:

(ԿԱՐՄԻՐ ԱՐԵՎ: «Փողոցում»)

Այս հատվածներում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի վաղակատար անցյալ:

ՍՊՀՄԾԱՆՈՒՄ. Վաղակատար անցյալը ցույց է տալիս մի յեղելուրյուն, վոր խոսելու վայրկյանից առաջ է կատարվել յեվ ավելի վաղ, բան անցյալում կատարվող վորեվի ուրիշ յեղելուրյուն (գու կարդում, ելիր, իսկ նա արդեն կարդացել եր):

ԿԱՆՈՆ. Վաղակատար անցյալում՝ ելի, ելիր, եր, ելինք, ելիք, ելինք— առանձին են գրվում:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Ինքներդ կազմեցեք վորեվերայի վաղակատար անցյալի խոնարհման պատկերը՝ դրական յեվ բացասական:

§ 60. Մեր դպրոցի շենքն այսոր մաերված ե, ամեն ինչ կարգի յերեված: Դասարաններում պատերից նկարներ, քարտեզներ ու դիագրամներ են կախ սփած: Դպրոցի մուտքերի մաս ազդ է կայցրած՝ վոտքերը մաքրելու և ապա ներս մտնելու մասին:

Այս հատվածում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի հարակատար ներկա ժամանակ:

**ՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ.** Հարակատար ներկան գույց ե տալիս մի յեղելուրյուն, վոր ավելի վաղ ե կատարվել, եսն ներկայում կատարվող մի ուրիշ յեղելուրյուն, բացի այդ, յեղելուրյունը հարատելվում ե մինչեւ խոսելու վայրկանը (գու նոր ես նստում, իսկ նա արդեն նստած ե. — դու նոր ես քնում, իսկ նա արդեն քնած ե):

**ԿԱՆՈՆ.** Հարակատարի ած վերջավորուրյունը գրվում ե ծով (գրած, գրված, ջարդած, ջարդված):

**ԿԱՆՈՆ.** Հարակատար ներկայում՝ եմ, ես, ե, ենք, են՝ առանձին են գրվում:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.** Ինքներդ կազմեցեք վորեվերայի հարակատար ներկայի խոնարհման պատկերը՝ դրական յեղ բացասական:

§ 61. Հրապարակի մեջտեղը շինֆած եր մի բարձր ամբիոն ճառախոսների համար: Ահապին բազմություն եր եավաբած: Շենքերի ճակատները զարգարված ելին կարմիր զրոշակներով, հեղափոխական գործիչների նկարներով, ծաղիկներով ու կանաչներով: Մենք կանգնած ելինք ամբիոնի մոտ:

Այս հատվածում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի հարակատար անցյալ ժամանակ:

**ՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ.** Հարակատար անցյալը ցույց ե տալիս մի յեղելուրյուն, վոր անցյալում մի ուրիշ յեղելուրյունից ավելի վաղ ե կատարված, բացի այդ, հարատելվում ե մինչեւ անցյալի մի ուրիշ յեղելուրյուն (գու յերեկ քնում ելիք, իսկ նա արդեն քնած եր):

**ԿԱՆՈՆ.** Հարակատար անցյալում՝ ելիք, ելիք, եր, ելինք, ելիք՝ առանձին են գրվում:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.** Ինքներդ կազմեցեք վորեվերայի հարակատար անցյալի խոնարհման պատկերը:

§ 62. 1. Դպրոցի դահլիճում ևեղի ու նենցավ աշխորհրդի ժողովը: Նախագահը կարգաց որակարդը. միքանի լրացումներ յեղան: Յուրաքանչյուր հարց առանձին-առանձին քննության առարկա գարձագ: Բոլոր վորոշումները քարտուղարն արհանագեց:

2. Բակի լայն գոները բացվեցին, կառքն ու ձին անհետացան, ներս մտավ և ինքը տան տերը, գոները փակվեցին:

(ԿԱՐՄԻՐ ԱԲԵՎԸ «ՓԱԼՈՂՈՂՈՎՈՒՄ»)

3. Շոգենավը կես ժամի չափ կանգ առավ չըդողնի առջև: Շոգեշարժ նավակներով յեկան ինչ-վոր պաշտոնյաներ, կատարեցին ինչ-վոր ձևականություններ: Այդ միջոցին նայեցի դեպի ովկիանոս և զարմացա:

(ԿԱՐՄԻՐ ԱԲԵՎԸ «ԱՃԵՐԻԿԱՅՈՎՈՒՄ»)

Այս հատվածներում բոլոր բայերը դրված են սահմանական յեղանակի անցյալ կատարյալ:

**ՍԱՀՄԱՆՈՒԹՅՈՒՆ.** Անցյալ կատարյալը ցույց ե տալիս մի յեղելուրյուն, վոր խոսելու վայրկանից պարզապես առաջ ե կատարվել:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Կազմեցեք վորեվերայի անցյալ կատարյալի խոնարհման պատկերը՝ դրական յեղ բացասական:

Ցույց տվեք բայերի անցյալ կատարյալն ու անկատարը հետեւյալ հատվածում:

Ծերունին գլխիկոր գուրս յեկավ հիվանդանոցի բակը և նստեց մի քարի վրա: Նա մի ծանր ախ քաշեց, մուշտուկը հանց գրանց ու գրեց ըերանին: Ծուփը քուլա-քուլա վերև եր բարձրանում: Ծերունին մի կողմից մուշտուկն եր քաշում ու մյուս կողմից ինքն իրեն խոսում...

(ԱՆՈՒԾ «Մանայուր Սեթը»)

## ԲԱՅԵՐԻ ԽՂՆԱՐԺՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

(Ընդհանուր պատկեր)

ա. ուսել, բ. ուսելիս (ուսելու, կերած) լինել

## I. ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ՑԵՂԱՆԱԿ

### I. ԱՆԿԱՏԱՐ ԵԵՐԿԱ

ուտում եմ	ուտելիս եմ լինում
ուտում ես	ուտելիս ես լինում
ուտում ե	ուտելիս ե լինում
ուտում ենք	ուտելիս ենք լինում
ուտում եք	ուտելիս եք լինում
ուտում են	ուտելիս են լինում

չեմ ուտում  
չս ուտում  
չի ուտում  
չենք ուտում  
չեք ուտում  
չեն ուտում

ուտելիս չեմ լինում  
ուտելիս չս լինում  
ուտելիս չի լինում  
ուտելիս չենք լինում  
ուտելիս չեք լինում  
ուտելիս չեն լինում

### 2. Անկատար անցյալ

ուտում ելի  
ուտում ելիր  
ուտում եր  
ուտում եյինք  
ուտում եյիք  
ուտում ելին

ուտելիս ելի լինում  
ուտելիս ելիր լինում  
ուտելիս եր լինում  
ուտելիս եյինք լինում  
ուտելիս եյիք լինում  
ուտելիս ելին լինում

չեյի ուտում  
չեյիր ուտում  
չեր ուտում  
չեյինք ուտում  
չեյիք ուտում  
չեյին ուտում

ուտելիս չեյի լինում  
ուտելիս չեյիր լինում  
ուտելիս չեր լինում  
ուտելիս չեյինք լինում  
ուտելիս չեյիք լինում  
ուտելիս չեյին լինում

### 3. Ապառնի ներկա

ուտելու յեմ  
ուտելու յես  
ուտելու յե  
ուտելու յենք  
ուտելու յեք  
ուտելու յեն

ուտելիս եմ լինելու  
ուտելիս ես լինելու  
ուտելիս ե լինելու  
ուտելիս ենք լինելու  
ուտելիս եք լինելու  
ուտելիս են լինելու

չեմ ուտելու  
չս ուտելու  
չի ուտելու  
չենք ուտելու  
չեք ուտելու  
չեն ուտելու

ուտելիս չեմ լինելու  
ուտելիս չս լինելու  
ուտելիս չի լինելու  
ուտելիս չենք լինելու  
ուտելիս չեք լինելու  
ուտելիս չեն լինելու

### 4. Ապառնի անցյալ

ուտելու ելի  
ուտելու ելիր  
ուտելու յեր  
ուտելու եյինք  
ուտելու եյիք  
ուտելու ելին

չելի ուտելու  
չելիր ուտելու  
չեր ուտելու  
չեյինք ուտելու  
չեյիք ուտելու  
չելին ուտելու

ուտելիս չելի լինելու  
ուտելիս չելիր լինելու  
ուտելիս չեր լինելու  
ուտելիս չեյինք լինելու  
ուտելիս չեյիք լինելու  
ուտելիս ելին լինելու

### 5. Վաղակատար ներկա

կերել եմ  
կերել ես  
կերել ե  
կերել ենք  
կերել եք  
կերել են

չեմ կերել  
չս կերել  
չի կերել  
չենք կերել  
չեք կերել  
չեն կերել

ուտելիս չեմ յեղել  
ուտելիս չս յեղել  
ուտելիս չի յեղել  
ուտելիս չենք յեղել  
ուտելիս չեք յեղել  
ուտելիս չեն յեղել

### 6. Վաղակատար անցյալ

կերել ելի  
կերել ելիր  
կերել եր  
կերել եյինք  
կերել ելիք  
կերել ելին

ուտելիս ելի յեղել  
ուտելիս ելիր յեղել  
ուտելիս եր յեղել  
ուտելիս եյինք յեղել  
ուտելիս ելիք յեղել  
ուտելիս ելին յեղել

չելի կերել  
 չելիր կերել  
 չեր կերել  
 չելինք կերել  
 չելիք կերել  
 չելին կերել

ուտելիս չելի յեղել  
 ուտելիս չեյիր յեղել  
 ուտելիս չեր յեղել  
 ուտելիս չելինք յեղել  
 ուտելիս չելիք յեղել  
 ուտելիս չելին յեղել

### 7. Հարակատար ներկա

կերած եմ  
 կերած ես  
 կերած ե  
 կերած ենք  
 կերած եք  
 կերած են

---

չեմ կերած  
 (կամ կերած չեմ)  
 չես կերած  
 չի կերած  
 չենք կերած  
 չեք կերած  
 չեն կերած

### 8. Հարակատար անցյալ

կերած ելի  
 կերած եյիր  
 կերած եր  
 կերած եյինք  
 կերած եյիք  
 կերած եյին

---

չելի կերած  
 (կամ կերած չելի)  
 չեյիր կերած  
 չեր կերած  
 չելինք կերած  
 չելիք կերած  
 չելին կերած

կերա  
 կերար  
 կերավ  
 կերանք  
 կերաք  
 կերան

ուտելիս յեղա  
 ուտելիս յեղար  
 ուտելիս յեղավ  
 ուտելիս յեղանք  
 ուտելիս յեղաք  
 ուտելիս յեղան

---

չկերա  
 չկերար  
 չկերավ  
 չկերանք  
 չկերաք  
 չկերան

ուտելիս չեղա  
 ուտելիս չեղար  
 ուտելիս չեղավ  
 ուտելիս չեղանք  
 ուտելիս չեղաք  
 ուտելիս չեղան

---

### II. ԸՆՉԱԿԱՆ ՑԵՂԱՆԱԿ

#### 1. Սպառնի ներկա

ուտեմ  
 ուտես  
 ուտի(ե)  
 ուտենք  
 ուտեք  
 ուտեն

չուտեմ  
 չուտես  
 չուտի  
 չուտենք  
 չուտեք  
 չուտեն

ուտելիս լինեմ  
 ուտելիս լինես  
 ուտելիս լինի  
 ուտելիս լինենք  
 ուտելիս լինեք  
 ուտելիս լինեն

---

ուտելիս չլինեմ  
 ուտելիս չլինես  
 ուտելիս չլինի  
 ուտելիս չլինենք  
 ուտելիս չլինեք  
 ուտելիս չլինեն

## 2. Թպառնի անցյալ

ուտելիի	ուտելիս լինելիի
ուտելիր	ուտելիս լինելիր
ուտելը	ուտելիս լինելը
ուտելինք	ուտելիս լինելինք
ուտելիք	ուտելիս լինելիք
ուտելին	ուտելիս լինելին

---

չուտելի	ուտելիս չլինելի
չուտելիր	ուտելիս չլինելիր
չուտելը	ուտելիս չլինելը
չուտելինք	ուտելիս չլինելինք
չուտելիք	ուտելիս չլինելիք
չուտելին	ուտելիս չլինելին

---

## III. ՅԵՆԹԱԴՐԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

### 1. Թպառնի ներկա

կուտեմ	ուտելիս կլինեմ
կուտես	ուտելիս կլինես
կուտի(ե)	ուտելիս կլինի
կուտենք	ուտելիս կլինենք
կուտեք	ուտելիս կլինեք
կուտեն	ուտելիս կլինեն

---

չեմ ուտի(լ)	ուտելիս չեմ լինի(լ)
չես ուտի	ուտելիս չես լինի
չի ուտի	ուտելիս չի լինի
չենք ուտի	ուտելիս չենք լինի
չեք ուտի	ուտելիս չեք լինի
չեն ուտի	ուտելիս չեն լինի

## 2. Թպառնի անցյալ

կուտելիի	ուտելիս կլինելիի
կուտելիր	ուտելիս կլինելիր
կուտելը	ուտելիս կլինելը
կուտելինք	ուտելիս կլինելինք
կուտելիք	ուտելիս կլինելիք
կուտելին	ուտելիս կլինելին

---

չելի ուտի (լ)	ուտելիս չելի լինի(լ)
չելիր ուտի	ուտելիս չելիր լինի
չեր ուտի	ուտելիս չեր լինի
չելինք ուտի	ուտելիս չելինք լինի
չելիք ուտի	ուտելիս չելիք լինի
չելին ուտի	ուտելիս չելին լինի

## IV. ՀԱՐԿԱՌՄԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

### 1. Թպառնի ներկա

պետք ե ուտեմ	ուտելիս պետք ե լինեմ
պետք ե ուտես	ուտելիս պետք ե լինես
պետք ե ուտի(ե)	ուտելիս պետք ե լինի
պետք ե ուտենք	ուտելիս պետք ե լինենք
պետք ե ուտեք	ուտելիս պետք ե լինեք
պետք ե ուտեն	ուտելիս պետք ե լինեն

---

չպետք ե ուտեմ	ուտելիս չպետք ե լինեմ
(պետք ե չուտեմ)	(չպետք ե ուտելիս լինեմ)
չպետք ե ուտես	ուտելիս չպետք ե լինես
չպետք ե ուտի(ե)	ուտելիս չպետք ե լինի
չպետք ե ուտենք	ուտելիս չպետք ե լինենք
չպետք ե ուտեք	ուտելիս չպետք ե լինեք
չպետք ե ուտեն	ուտելիս չպետք ե լինեն

## 2. Ապառնի անցյալ

պետք ե ուտելի  
պետք ե ուտելիք  
պետք ե ուտեր  
պետք ե ուտելինք  
պետք ե ուտելիք  
պետք ե ուտելին

ուտելիս պետք ե լինելի  
ուտելիս պետք ե լինելիք  
ուտելիս պետք ե լիներ  
ուտելիս պետք ե լինելինք  
ուտելիս պետք ե լինելիք  
ուտելիս պետք ե լինելին

չպետք ե ուտելի  
(պետք ե չուտելի)  
չպետք ե ուտելիք  
չպետք ե ուտեր  
չպետք ե ուտելինք  
չպետք ե ուտելիք  
չպետք ե ուտելին

ուտելիս չպետք ե լինելի  
(չպետք ե ուտելիս լինելի)  
ուտելիս չպետք ե լինելիք  
ուտելիս չպետք ե լիներ  
ուտելիս չպետք ե լինելինք  
ուտելիս չպետք ե լինելիք  
ուտելիս չպետք ե լինելին

## Վ. ՀՐԱՄԱՅՑԱԿԱՆ ՅԵՂԱՆԱԿ

կեր ուտելիս յեղիք կերէք ուտելիս յեղէք  
մի ուտի ուտելիս մի լինի մի ուտեք ուտելիս մի լինիք  
Ուտելիս լինել բայի պես խոնարհեցիք.

ուտելու լինել և կերած լինել  
գնալու լինել և գնացած լինել

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Արտազրեցե՞ք՝ դրական բայերը  
բացասական դարձնելով յեվ, ընդհակառակը, բացասական  
բայերը՝ դրական.

Ար. Հարցըն Տիգրանին, նա քեզ կասի այդ մասին: Մի  
հարցնի Տիգրանին, նա քեզ չի ասի այդ մասին:

Ստացիք այդ գրությունը և Արշակին տար:— Միսաք, գնաս՝  
ջուր բերես:— Արամը յեկէլ ե արդիոք:— Նրան ենք սպասում:—  
Յեկէլ ե, տեսել ու գնացել:— Թե տեսել ե և թե հետը խոսել:—  
Վոչ կարդացել ե, վոչ ել միտքը հասկացել:— Յես ալդ բանը նոր  
եմ իմանում:— Գրիգորը զյուղ կզնար, լիթե կառք լիներ:— Յե-  
րանի գնալի ե նրան տեսնելի:— Հերթը քոնն ե, դու պիտի զը-  
նաս:— Վոչ Շուշիկն ե լեկել վոչ ել վարսիլը:— Մեսը հաճախ  
տեսնում եյինք նբանց:— Գյուղը քաղաքից հեռու լի:— Նա կա-

լոտ չի ոգնության:— Յեկ և այս բանը տես:— Յեթի գրադարան  
գնաս, այդ զիրքը կստանաս:— Լավ կանես, լիթե գնաս:— Մի  
փախցնի, այդ իմն ե:— Մի հարցնի, պատասխանը չես ստանա:—  
Այդ տղան հինգ տարեկան կլինի:— Մեր զնացած ճանապարհը  
տաս կիրոմեար կլինիր:

Յո՛ւյց տվեր բայերը՝ խոսքերը լրացնելով.

1. Ախտն աղբյուրից ջուր ե առել  
կույս սափորով, լուռ ու մունջ,  
սիսը ծաղկից ծաղիկ քաղել  
կապել սիրո ծաղկեփունջ.  
ջուրն ու ծաղկունք աստղունք դրել,  
խնդիրք արել աստղերին,  
փափատ սրտով խնդիրք արել՝  
բարի ժպտան իր սերին...  
(ՀԱՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆ «Անուշ»)

2. Ամառնամուտ ե և ծիրան,  
Ամում ե շուրջդ ամեն ինչ:  
Արեն և վերեկից ծորում,  
Բուրում քաղցրություն,  
Նարինջ:

Հույզերի ալիք մի ահազին  
Յեկվում ե վոլորտում իմ հոգու, —  
— Ամառնամհուտն ե իմ կյանքի,  
Վոր հոգուս գռներն ե թակում:  
Ամառնամուտ ե ամենուր,  
Ամում կա շուրջս ճոնչող,  
Յեկ գլխումս մութ մի հանելուկ  
Քչփորում ե բութ մի փորիչով...  
(ԽՈՐԵՆ ՌԱԴԻՔԻՄ «Ամառնամուտ»)

## Հ Ա Բ Յ.

Ի՞նչն ե պակասում խոսքերի մեջ:  
Ի՞նչ ժամանակ են զրված բայերը:  
ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Արտազրեցեք հետեվյալ հատ-  
վածը՝ Եերկա ժամանակը փոխելով անցյալ կատարյալ:  
Ար. Արամը գնում ե տուն, տեսնում և մորը:— Արամը զը-  
նաց տուն, տեսավ մորը:

Էռուսը բացվում է: **Փոքրիկ Սուրիկը** զարթնում և քնից,  
ըլքացվում է, նախաճաշ անելուց հետո զպրոց և շտապում: Ճա-  
նապարհին պատահում է իր ընկերոջը՝ չարաճճի Լեփիկին. յեր-  
կուսը միտուին, կատակներ անելով, գնում են դպրոց:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.** Արտազրեցիք հետեվյալ հատ-  
վածը՝ բայերի առաջին գեմքը յերօրդ գեմքի փոխելով.

**Որ՝ յես վեր կացա և գնացի. — նա վեր կացավ ու գնաց.**  
Յես դեռ շատ փոքր ելի, լերը տուաշին անգամ տվտոմոքիւ  
ու յերկաթուղի տեսա: Հիշում եմ, թե վնաքան զարժացա. չեմ  
կարողանում հասկանալ նրանց շարժելու պատճառը:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.** Արտազրեցիք հետեվյալ հատ-  
վածը՝ բգձական յեղանակը երամաչականի փոխելով.

**Որ՝ այս զիրքը տանես ու տաս նրան. — այս զիրքը տար  
և տուր նրան:**

**Սուրիկ,** առավոտը շուտ վեր կենաս ու շուկա գնաս, ճաշի  
մթերքն ինքդ առնես, տուն բերես. ճանապարհին չուշանաս,  
սրա-նրա հետ չխոսես, շուտ տուն դաս, մթերքը մարիկիդ հաս-  
թընես:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.** Պատմեցեք անցյալում տեղի  
ունեցած վորեզն դեպք ներկա ժամանակով. ծեր պատմածը  
զի՞ առեք:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.** Պատմեցեք ծեր կենսագրու-  
թյունը շատ համառոտ յեվ վաղակատար ներկայով (որ՝ յես  
ծնվել եմ...): Զեր պատմածը զրի առեք:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.** Պատմեցեք անցյալում հաճախ  
կրկնվող մի բան (որ՝ յես ամեն որ գնում ելի լողանալու).  
Ի՞նչ ժամանակով եր պատմում: — Նոյնը պատմեցեք անկատաք  
ներկայով:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.** Նկարազրեցիք մեր դպրոցը,  
ծեր տունը, գյուղը, բաղարը, ծին...: Առարկաների նկարազրու-  
թյան մեջ բայերն ի՞նչ ժամանակ եր դնում

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.** Զեր գյուղում ի՞նչ առածներ  
եր լսել, ասացեք: Ի՞նչ ժամանակներ են գործ ածվում այդ  
առածներում:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.** Զեր գյուղում ի՞նչ սովորու-  
թյուններ կան, պատմեցեք, պատմածը զրի առեք: — Ի՞նչ ժամա-  
նակով եր պատմում ծեր գյուղի սովորությունները:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.** Ի՞նչ կուզեյիք դուք դառնալ,  
ասացեք—ի՞նչ ժամանակով եք հայտնում ծեր ցանկությունը  
յեվ ի՞նչ յեղանակով:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.** Առողջապահական միքանի կա-  
նոններ շարադրեցեք: — Բայերն ի՞նչ յեղանակ յեվ ի՞նչ ժամա-  
նակ եք դնում:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.** Թվաբանական, յերկրաչափա-  
կան... միքանի որենքներ ասացեք: — Բայերն ի՞նչ յեղանակ  
յեվ ի՞նչ ժամանակ եք դնում:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.** Բնութագրեցեք ծեր կարդացած  
հերոսներից մեկին: — Բնութագրության մեջ բայերն ի՞նչ ժամա-  
նակ եք դնում:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.** Խոնարհեցեք՝ գնալիս լինել,  
գնալու լինել, գնացած լինել:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.** Լրացրեք հետեվյալ բայերը  
ստորեկ ցույց տված ծերվով:

1. Անկատար	2. Վաղակ.	3. Անցյալ	4. Հրամ.	5. Արգել
ներկա	ներկա	կառ.	երամ.	

Գնում եմ	գնացել եմ	գնացի	գնա մի գնա	
Ուտում եմ	կերել եմ	կերտ	կեր մի ուտի.	
Տեսնում եմ	տեսել եմ	տեսա	տես մի տեսնի	
Հասնում եմ				
Մտնում եմ				
Խմանում եմ				
Իմացնում եմ				
Թոչում եմ				
Փախչում եմ				
Կորչում եմ				
Գալիս եմ				
Տալիս եմ				
Փախցնում եմ				
Կորցնում եմ				
Կարդացնում եմ				
Կարդացնում եմ				
Սիրտ եմ				

Գնալիս եմ լինում	»	»	»	»
Գնալու չեմ լինում	»	»	»	»
Գնացած եմ լինում	»	»	»	»
Առնում եմ	»	»	»	»
Չեմ ուտում	»	»	»	»
Չեմ մտնում	»	»	»	»
Չեմ փախչում	»	»	»	»
Սիրո չեմ անում	»	»	»	»
Ճաշած չեմ լինում	»	»	»	»

§ 63. ա) 1. Այն աշակերտը, վոր կարդում եր, յեկավ:

2. Կարգացող աշակերտը յեկավ:

բ) 1. Այն նամակը, վոր գրեցիր, տուր:

2. Քո գրած նամակը տուր:

գ) 1. Այն գիրքը, վոր պիտի կարդաս, կրերեմ:

2. Քո կարգալու գիրքը կրերեմ:

Կարգացող, զրած, կարգալու—գերբայներ են:

ՍԱՀԱՄՈՆՈՒՄ. ԳԵՐԲԱՅ կոչվում են բայի այն ձեվերը, վորոնի դեմք չունեն:

ԳԵՐԲԱՅՆԵՐԸ հետեվյալ վերջավորություններն ունեն.

ա) աւ, եւ—կարգաւ, զրեւ—այս գերբայը կոչվում է անօրութեայ, վոր բայի գործողության անունն է ցուց տալիս. Վործ և ածվում իրրե բայանուն (զրեւ զրելու, զրելուց, զրելով) և զեմք ու թիվ չունի:

բ) ում, իս—կարգում, կարգալիս—անկատար գերբայ, վոր ցուց և տալիս այնպիսի լեզելություն, վոր շարունակվում է, զեռ չի վերջացել ու վոր կարող է գործածվել իրրե բայական մակրայ (իս նրան կարգալիս (կարգալու ժամանակ) տեսա), և վորից կազմվում են անկատար ներկան և անկատար անցյալը (զրում եմ, զրում եյի):

շ) ու, ի՞—զրելու, զրելի՞—ապառնի գերբայ, վոր ցուց և տալիս հետո կատարվելիք լեզելություն.—ու վերջավորությամբ ապառնի զերբայից կազմված են սահմանական յեղանակի ապառնի ներկան և ապառնի անցյալը (զրելու յեմ, զրելու եյի). Կարող է գործածվել իրրե բայածական (զրելու թուղթ). Իսկ ի՞ վերջավորությամբ ապառնի զերբայը զործ է ածվում կամ իրրե

գոյական (յես զրելիք ունեմ—ինչ ունեմ) և կամ իրրե բայածական (իմ զրելիք նամակը):

զ) ած, եւ—զրած, զրեւ կարգացած, կարգացել.—ած վերջավորությամբ զերբայը կոչվում է հարակատար անցյալ գերբայ, նրանով կազմվում են, հարակատար ներկան և հարակատար անցյալը (կարգացած եմ, կարգացած եյի). Կարող է գործածվել իրրե ածական (կարգացած զիրք). Եւ վերջավորությամբ զերբայը կոչվում է վազակատար գերբայ. նրանով կազմվում են վազակատար անցյալը:

ե) ող — զրող, կարգացող — յենքակայտական գերբայ, վոր ցուց և տալիս անողի կամ լեզողի գաղափարը և կարող է զործ ածվել իրրե բայածական (կարգացող աշակերտ):

Գտներ սառիթվ զրված բայերի հարակատար, վաղակատար եվ յենքակայական դերբայները. որինակ՝ զրել—զրած, զրեւ զրող. գնալ—գնացած, գնացել գնացող. տեսնել—տեսած, տեսեր տեսնազ, կորչել—կորած, կորել կորչող և ալին:

1. Խոսել, խստել, լերգել, վազել կարեւ թափել, հապել ճանապարհորդել սպասել:

2. Կարգալ, գնալ, մնալ, հիանալ, զարմանալ, մոռանալ գոյնակ, քարանակ:

3. Գախենալ գիտենալ, մոտենալ:

4. Տեսնել, մեռնել, հասնել, յենել, մտնել:

5. Փախչել, սառչել, ուռչել:

6. Կարգացնել հիացնել, զարմացնել, մոռացնել, մհծացնել, չիոքացնել:

7. Խոսեցնել, մոտեցնել նոտեցնել:

8. Գրել տաւ կտրել տաւ ջարդել տաւ:

9. Յեռ գար պար գար թափ տաւ, սիրտ անել:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. Բացատրեցե՛ք աս, ոս, և միջածանցների նշանակությունը հետեվյալ անորոշ զերբայների (կամ նրանցից կազմվող դիմավոր բայերի) մեջ.

Կոտրել — կոտրատել

Կտրել — կտրատել

Ջարդել — ջարդուել

Ժակել — ժակուել

Խոտել — խոտտել

Ապակել — պառկոտել

Փշել — փշուել

Ալատուել — պատուել

**ԱՍՀՄԱՆՈՒՄ.** Աս, ոս, և միջածանց ունեցող դերբայները յեվ բայերը բազմայտակական են կոչվում յեվ ցույց են տալիս գործողության կամ յերբենն նայեվ գործող անձերի բազմապատկություն (ջարդութել—միշանի տեղից ջարդել, նատուլ = մեկից ավելի նատուլել):

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.** Բացատրեցե՛ք ացն, եցն, ցն միջածանցների նշանակությունը հետեւյալում.

Կարդալ — կարդացնել մոտեցնել  
Խաղալ — խաղացնել կորչել — կորցնել  
Նստել — նստեցնել փախչել — փախցնել  
Հերոհիշյալ ծեփերով ածանցեցե՛ք հետեւյալները.

Խոսել, խմանալ սառել, հասնել պլրծնել, դառնալ, լալ ուտել:

**ԱՅՀՄԱՆՈՒՄ.** Ացն, եցն, ցն միջածանցներով դերբայները են բայերը պատճառական են կոչվում, վորովինենի ցույց են տալիս, վոր մի առարկա պատճառ է դառնում, վոր մի ուրիշ այս կամ այն գործողությունը կատարի. որ՝ Հայկը նստեցրեց Աշոտին=Հայկը պատճառ դարձավ, վոր Աշոտը նստի:

**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ.** Բացատրեցե՛ք և միջածանցի նշանակությունը.

Կտրել — կտրվել հեռանալ — հեռացվել  
Սպանել — սպանվել ներկայանալ — ներկայացվել  
Մանել — մարվել վերանալ — վերացվել  
Գողանալ — գողացվել յուրացնել — յուրացվել

**ԱՅՀՄԱՆՈՒՄ.** Վ միջածանց ունեցող դերբայները յեվ բայերը կրավորական են կոչվում, վորովինենի ցույց են տալիս այնպիսի գործողություն, վոր նախապատրիյան մեջ անող կամ յեղող առարկան (յենրական) մի ուրիշից կրում է իր վրա.

Դերբայները կազմությամբ յերկու տեսակ են լինում 1. պարզ, 2. ածանցական:

Պարզ կոչվում են այն դերբայները, վորոնց աւ, եւ վերջառվություններն ավելանում են բայի հիմքի վրա, վոր կարող է լինել մի արմատ, մի պարզ, բարդ, կամ ածանցական բառ. որինակ՝ կարգալ (կարդ արմատ), չերգ-ել (յերգ պարզ բառ), Եկարտագ-ել (նկարազարդ բարդ բառ), Շնորհավոր-ել (շնորհավոր ածանցագործ բառ):

**Ածանցական կոչվում** են այն դերբայները, վորոնց հիմքի և լծորդի մեջ վորնեն միջածանց և մոնում. այդ միջածանցները հետեւալներն են, վորով և դերբայներն ու բայերն են կոչվում.

1. Սոսկածանց դերբայներ (բայեր) — ան, են, ն, չ սոսկածանց միջածանցներով. որինակ՝ ուրախ-ան-ալ, մոտեն-ալ, տես-ել, փախ-չ-ել:

2. Բազմապատկական -- ան, ոս, և բազմապատկական միջածանցներով:

3. Պատճառական — ացն, եցն, ցն պատճառական միջածանցներով:

4. Կրավորական — վ կրավորական միջածանցով:

## Ե. ՄԱԿԱՅԱՅԻ

§ 64. Բանվորներն արագ գործի կպան, բրիչներն ուժգին, օւստակի մխվում եյին իերկի կուրծքը: «Ճիմա կզլորհնք», — խրոխ հնչեց մեկի օտա ուժեղ ձայնը:

Ուժգին, օւստակի, հիմա, խրոխ, օտա բառերը մ ա կ բ ա յ ե ե ր են:

**ԱՅՀՄԱՆՈՒՄ.** Մակրայ կոչվում են այն ածական բառեր, վերաց արտահայտած գաղափարներն անկախ զոյուրյուն չանեն կամ վրեվի անկախ գոյուրյուն ունեցող չեն մտածվում, այլ կախված վրեվի ուրիշ գաղափարից, որ՝ խրոխ հեծեց կապակցության մեջ խրոխ բառի արտահայտած գաղափարը մտածվում է հեծեց բառի արտահայտած գաղափարի նետ կապված: Մակրայները բայի կամ ածականի վրա դրվելով ցույց են տալիս հատկանիքի հատկանիք, կամ բայի գործողության գանձագան պարագաները, ալպինքն, թե բայի գործողությունը վիրտեղ և կատարվում (տեղի պարագան ամենուրեմ լեզել են), լերը և կատարվում (ժամանակի պարագան հիմա կպա), ինչպիս կամ ինչ կերպ և կատարվում (ձեվի կամ վորակի պարագան բաշարաց կովեց), ինչ չափով, վիրքան, քանի անգամ և կատարվում (ժամանի պարագան կրկնակի ու լեռակի մեծացավ), ինչու համար, ինչ նպատակով և կատարվում (նպատակի պարագան), ինչու ինչ պատճառով և կատարվում (պատճառի պարագան):

